

## Ա Ն Դ Ր Է Ս Ս Ե Ր Է Ց

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱԿ (1617)

(1601 — 1617 )

Տամն և եօթերորդ դարու առաջին քառորդին՝ Հայուստանի վրայ ծանրացող թշուառութիւնները հասել էին իրենց գաղաթնակէտին։ Պատճառը Պարսից և Օսմանցւոց անընդհատ պատերազմներն էին, որոնց թատր եղած էր մեր ապարադ աշխարհը։

1586 թուականին Պարսից Ջահարաս Ա. թագաւորը, որ նոր էր իւր Խուտաբանդ հօր գահը ժառանգել, տակաւին անզօր լինելով և, մանաւանդ թէ, Օսմանցիներից վախենալով, ոչ միայն հետամուտ շեղաւ նրանց՝ իւր հօրից յափշտակած՝ Հայաստանի մի քանի գաւառները յետ առնելու, այլ և պատանըներ տալով հաշտութիւն խօսեց Սուլթան Մուրադի հետ։ Այսպիսով 16-րդ դարու վերջին քառորդին Հայաստանը գրեթէ ամբողջապէս անցաւ Օսմանցւոց ձեռքը։

Օսմանցի կուսակալները ազատ զգալով իրենց Պարսից կողմից գալիք վտանգներից, սկսաւ ծանր և անտանելի հարկերով նեղել և տանջել Հայոց ժողովուրդը, որն արդէն բազմամեայ հարստահարութիւններից վերջին աղ-

քատութեան էր հասած։ Նոյնպիսի ծանր հարկերի են-  
թարկեցին նրանք, նաև, էջմիածնի կաթուղիկոսական  
աթոռը, որ նոյնպէս խեղճ վիճակում էր գտնւում։

Առաքել կաթուղիկոսը, որ աղքի ցաւերին՝ ի սրտէ  
կարելիցող և աթոռի համար կարի հոգատար մի հովիր  
էր, շատ զանք գործ դրաւ ժողովրդի և էջմիածնի վրայ  
ծանրացող հարկերը փոքր ՚ի շատէ թեթեացնելու, բայց  
երբ տեսաւ որ իւր զանքերն ի դերեւ են ենում և որ  
այդ հարկերից առաջացած աթոռի պարտքերը գնալով  
ծանրանում են, և, մանաւանդ թէ, ժամանակի դառնու-  
թեան դիմադրելու չափ ոյժ պակասում է իրեն, երկու  
տարի կաթուղիկոսութիւն անելուց յետ՝ հրաժարուեց  
գահից և Թաւիթ էջմիածնեցուն կաթուղիկոս ձեռնադրե-  
լով՝ աթոռը յանձնեց նրան և ինքը քաշուեց մի վանք,  
իւր աղքի ցաւերը լուռթեան մէջ ողբալու։

Դաւիթ կաթուղիկոսը իւր նախորդից աւելի դօրեղ  
չգտնուեցաւ։ Օսմանցի կուսակաները նոր կաթուղիկոսի  
համար ոչ միայն զիջումներ չարին, այլ և ուրիշ նոր  
հարկեր էլ աթոռի վրայ բարձելով պահանջեցին որ նա,  
իբրև ընդհանուր աղքի զլուխ, ժողովէ իւր ժողովրդից  
այդ հարկերը և վճարէ իրենց։ Կաթուղիկոսը շատ աշ-  
խատեց, չարչարուեց, իւր վիճակը պտտեց և, շատ ան-  
գամ, արտասուլն աչքերին՝ աղքատացած ժողովրդի վեր-  
ջին փողերը հաւաքելով տուաւ կուսականերին։ բայց երբ  
տեսաւ որ նրանց անիրաւ պահանջները գոհացնել չի կա-  
րողանում, փախուստ տուաւ աթոռից և սկսաւ անծա-  
նօթ վայրերում ու խորշերում թագստեամբ ապրել։ Իսկ  
յետոյ տեսնելով որ այդպիսով բոլորովին հեռանում է ա-  
թոռից և էջմիածնը աւերման է ենթարկում, իսկ ա-  
թոռի պարտքերը նուազելու փոխարէն աւելի ևս աճում  
են, յետ դարձաւ էջմիածնն և իւր միաբանների հետ  
խորհրդակցելով՝ Դառնեցի Մելքիսեդէ եպիսկոպոսին ձեռ-

Նապիեց կաթուղիկոս, իրեն իրեն օհնական (1593 թ.):

Երկու կաթուղիկոսների միասնական ջանքերն էլ ուշնչ օգուտ չբերին աթոռին: Նրանց հաւաքածը հազիւ պարտքի մի տասանորդը ծածկեց: Ուստի սկսան տոկոսով պարտքեր վերցնել օտարներից: Բայց այդ միջոցը աւելի ևս վատթարացրեց նրանց դրութիւնը: Որովհետեք քիչ ժամանակից Տէրութեան կուսակաների հետ միասին պարտատէրներն էլ միւս կողմից սկսան նեղել և հալածել նրանց: Երկու կաթուղիկոսները ստիպուած եղան դարձեալ փախուստ տալ, անծանօթ տեղեր թափառել. մինչև անգամ ցերեկով պտըտել չէին համարձակում, այլ գիշերներն էին շրջում գիւղից դէպի գիւղ, կամ մի վանքից դէպի միւսը:

Եյս տառապանաց օրերում վրայ հասաւ, նա և, մի սարսափելի սով, որ աւեր և ապականութիւն սփռեց ամբողջ Հայաստանի վրայ:

Սուլին հետեւեց ժանտախտը, որ ճարակեց այդ երկրի բազմաթիւ գաւառները:

Հազիւ այդ երկու բնական պատուհանները դադարեցին, և ահա Ճելալիք կոչուած աւաղակախմբերը, որոնց առաջնորդում էին Ծուլք պաշտօնանկ փաշաներ ու բըդեշմներ, ողողեցին Հայաստանը և աննկարագրելի աւեր ու սրածութիւն սփռելով նրա մէջ՝ կողոպտեցին ու յափշտակեցին բնակիչների գոյըն ու ստացուածը և հարուստ աւարով ու բազմաթիւ գերիներով իրենց որչերը դարձան:

Եյս ամենը շարունակում էր մինչև 1602 թուականը: Եւ որովհետեւ այս արտաքոյ կարգի Ծշուառութեանց հետ միասին Հայաստանը կառավարող Օսմանեան պետական կուսականերն էլ իրենց հարստահարութիւններն էին շարունակում, ուստի ժողովրդի տառապանքների հետ միասին կրկնապատկուեցան նա և կաթուղիկոսական աթոռի պարտքերը, իսկ Դաւիթ ու Մելքոնեթ

կաթուղիկոսները աւելի ծանր նեղութիւնների ու հալածանքի ենթարկուեցան։ Ի վերջոյ տեսնելով նրանք որ աղատուելու հսար չունեն, հրաւիրեցին իրենց մօտ— Ձուղա քաղաքը, Սմդայի յաջորդ Սրապիոն վարդապետին, որը մի իմաստուն և առաքինի մարդ էր և հայրենական հարուստ ժառանգութիւններ ունէր, և առաջարկեցին նրան՝ յանձն առնել կաթուղիկոսութիւնը և իւր ունեցած հարստութեամբ աղատել աթոռը պարտքից ու աւեր- մունքից։

Թէպէտ սկզբում առաջարկուած պայմանների վրայ համաձայնել չկարողանալով նրանք բաժանուեցան, բայց յետոյ, նոյն իսկ Ձուղայի ժողովուրդը, առաջին երկու կաթուղիկոսների աթոռից հեռանալը անհրաժեշտ գըտ- նելով, ինքը Սրապիոնին տարաւ էջմիածին և կաթուղի- կոս օծել տալով, աթոռը յանձնեց նրան։

Եւ ահա այդ ժամանակ, այն է 1602 թուականին, ընդհանուր հայոց մէջ, վեց օծեալ կաթուղիկոսներ կա- յին։ Նրանցից երեքը՝ Սրարատեան նահանգում, մինը՝ Աղթամարում և երկուսը՝ Կիլիկիայում, որոնցից առաջի- նը նստում էր Աղանա, իսկ երկրորդը Սիս։

Չնայելով որ ազգի ընդհանուր ցաւերն էին այս տա- րօրինակ դրութիւնները ստեղծում, այսու ամենայնիւ օ- ծեալ կաթուղիկոսներից և ոչ մինը կաթուղիկոսական իրաւունքներից զուրկ չէր համարում իրեն։ այդ պատ- ճառով և դրսից եկած նեղութիւնների վրայ աւելացան նա և ներքին խռովութիւններն ու պառակտումնելը։

Այս զանազանակերպ թշուառութեանց ու անկար- գութեանց չնորհիւ, ինչպէս որ երկիրը հետզհետէ սկսաւ ընակիչներից դատարկուել, այնպէս էլ անապատները ա- մայացան, վաճեցերը անշքացան, միաբանութիւնները ցը- րուեցան և այլ նս ոչ մի տեղ չմնաց հայ ժողովրդի հա- մար սփոփանք և մսիթարութիւն։

Սրա վրան էլ պէտք է աւելացնել Ունիթօր կամ Միաբանող կոչուած պապական արքանեակների սխրագործութիւնները։ Դրանք դեռ 13-րդ դարու կիսից մուտ էին գործել մեր աշխարհը և ամեն տեղ տարածուել, սկսած Ռուբինեան թագաւորութեան երկրից մինչև Հայաստանի հեռաւոր նահանգները։ Անհաւատներին քրիստոնէութիւն քարոզելու փոխարէն, դրանք նահատակ հայ ժողովրդի անդամներն էին որսում, հայրենի եկեղեցուց հեռացնում և «Միաբանող» լինելու փոխարէն՝ բաժանող ու պառակտող հանդիսանում։ Դրանք հեռացնում էին որդին ծնողից, եղբայրը եղբօրից, կինը՝ ամուսնուց և ընտանիքների ու հարազատների միջից սէրն ու միութիւնը վերացնում։ Միուղ բանիւ, մահմեղական հրէշների թողած պակասը իրենք էին լրացնում և դեռ մի բան էլ աւելի, որովհետև նրանք նիւթապէս էին կեղեքում, իսկ սրանք՝ հոգեպէս և բարոյապէս։ Եւ ինչ էր դրանց ողորմելի նըպատակը. այն՝ որ Պապի հոգևոր ստրուկների թիւը մի բանի հազարով աւելացնեն. մի ձգտում, որ ժամանակակից կաթոլիկ միաբանութիւնների միակ ու գերագոյն նպատակն էր կազմում։ Մի բանի դար շարունակ գործելով չայաստանի մէջ, դրանք հաստատուն բնակավայր էին ընտրել Սիւնեաց նահանգը։ Նրա ճահուկ, երնջակ և նախճաւան գաւառները գրեթէ ամբողջապէս իրենց ձեռքն էին անցել։ Նախիջևաննում, մինչև անդամ, տուաշնորդների կամ կարգապետների յաջորդութիւն էին հաստատել և «Միաբանող» ժողովրդից տուրք էին առնում։ Ժողովրդի անտէրութիւնից օգտուելով նրանք արձակ, համարձակ մտնում էին ամեն տեղ, քարոզում էին նոյն իսկ մեր վանքերում։ Նրանցից մի քանիսի յանդգնութիւնը հասել էր մինչև այնտեղ, որ օր ցերեկով գալիս, բրում էին մեր եկեղեցիները և դրանց մէջ թաղուած սրբոց մատոնիները յափշտակում, ինչպէս այդ պատահեց Սրբաց

Հոփիսիմեանց վկայարանի հետ, ուր երկու պապական վարդապետներ մտնելով քանդել էին սրբունու գերեզմանը և նրա նշխարները յափշտակել. Բայց էջմիածնի միաբանութիւնը իրազեկ լինելով այդ անօրինակ սրբապրդութեան՝ յարձակուեց յափշտակիչների վրայ և փառաւոր ջարդ տալով նրանց, սրբունու մասունքները աղատեց։

Եյս ծայրահեղ թշուառութիւնները և բնդիանուր յուսահատութիւնը հերոսական ոգի ներշնչեցին երեք տարագիր հայ հոգևորականներին. Դրանցից մինը Սաղմոսավանքի առաջնորդ Պարոն Մականուանեալ Սարգիս եպիսկոպոսն էր, միւսը՝ Մինեցի Մովսէս վարդապետը և երրորդը Տրապիզոնցի Կիրակոս երէցը, որոնք տարիներ առաջ հեռացել էին Հայաստանից և ճգնաւում էին երուսաղէմում. Հայրենի երկրից հետզհետէ համնող տիսուր լուրերը ճմեցին, խոցուտեցին նրանց զգայուն սրտերը, — Այստեղ Քրիստոսի գերեզմանի մօտ ճգնելով մենք մեր հոգիների փրկութեան համար ենք մտածում, մինչդու այնտեղ, մեր հայրենիքում, բիւրաւոր հոգիներ դժոխային տանջանկների մէջ են հեծում. աւելի հաճոյ չէր լինիլ Աստծուն եթէ մենք մեր ճգնութիւնը մեր հայրենակիցների տանջանքները թեժեւացնելու մէջ որոնէինք. և եթէ չկարողանայինք իսկ օգնել նրանց, գոնէ նրանց հետ միասին տանջուէինք...» մտածեցին ազնուասիրտ և հայրենասէր հոգևորականները և վերադարձան Հայաստան։

Բայց ի՞նչ կարող էին անել նրանք այդ ժամանակ. զէնք չունէին, զօրք չունէին, ժողովրդի մէջ նիւթական ու բարոյական ոյժ չէր մնացել. ինչնվ կարող էին երկրի վրայ ծանրացող թշուառութեան դառնութիւնը մեղմացնել։

Մակայն նրանք գիտէին մի դեղ, որ այսպիսի ժամանակներում արդիւնաւոր ներգործութիւն է անում հիւանդ մարմնի վրայ. այդ՝ մարդկային ոգին տանջանքնե-

րի և հալածանքների դէմ զօրացնելն էր մարդուն՝ անձնութեան սովորեցնելն էր:

Եւ ահա, այդ նպատակաւ, նրանք Սիւնիք հասնելով, հիմը դրին Սիւնեաց հոչակաւոր անապատին. ժողովեցին այլտեղ հոգւով և մտքով կորովի մարդիկ, կազմեցին մի բազմամարդ միաբանութիւն, որ կարող էր դիմագրաւել ամեն տեսակ նեղութեան և ոկսան միջոցներ որոնել ժամանակակից թշուառութեան առաջն առնելու համար.

Մինչդեռ Սիւնեաց անապատը այդ զբաղմունքների մէջ էր և նրա միաբանութեան ամեն մի անդամը լոփկ, մնացիկ ապագայում ստանձնելիք պաշտօնի համար էր պատրաստում, եզմիածնի Աթոռից ժամանակաւոր հրաժարուած Դաւիթի ու Մելքիսեծի կաթողիկոսները ուրիշ նպատակների էին ձգտում: Որովհետև Սրապիոնի կաթողիկոսանալովը դարձեալ նրանք պարտքից ու հալածանքից չազատուեցան, ըստ որում Օսմանցի կուսակաները սրանցեց հին պարտքերն էին պահանջում իսկ Սրապիոնի վրայ նորերը բարձում, ուստի մի կարի կորստաբեր խորհուրդ յղացան նրանք, այն է՝ դիմել Պարսից Ճահաբաս թագաւորին, որը այդ ժամանակ հետղհետէ զօրանում էր իւր երկրում, և հրաւիրել նրան Հայաստան թէ երկիրը գրաւելու և թէ անվերջ հարկերից ու պարտքերից իրենց ազատելու: Եւ շուտով էլ այս խորհուրդը գլուխ հանեցին: Մելքիսեծի կաթողիկոսը մի քանի եպիսկոպոնների հետ միասին գնաց Սպահան, ներկայացաւ Ճահ Աբասին և իւր պաշտօնակցի ու հայ ժողովրդի կողմից Հայաստանը գրաւելու խնդիրն առաջարկեց նրան:

Ճահաբասը սիրով լսեց նրա խնդիրը. երկրի ամեն հանգամանքների մասին տեղեկութիւն առաւ նրանից և ապա մեծամեծ խոստումներ անելով կաթողիկոսին, ծանր զօրքով Հայաստան մտաւ.

Այս առաջին արշաւանքի ժամանակ, այն է՝ 1603

թուին, նա գրաւեց Օսմանցիների՝ իւր հօրից խլած բռ-  
լոր գաւառները։ Երկրորդ արշաւանքի ժամանակ, այն է՝  
1605 թուականին, Օսմանցիների գօրեղ հետապնդութիւ-  
նից խուսափելով, նա չայաստանի մի քանի նահանգները  
դատարկեց բնակիչներից և նրանց բոլորին քշեց Պարս-  
կաստան։ Այդ բազմամբուխ ժողովրդի գրեթէ կէս մասը  
նա խեղդեց Երասմի մէջ՝ նրանց այդ գետից շտապաւ  
անցնելու ժամանակ, և հաղիւ կէս մասը հասցրեց իւր եր-  
կիրը։ 1606-ին կրկին վերադառնալով՝ շահաբասը պա-  
շարեց Օսմանցիների գրաւած նախիջևան, Երևան, Գան-  
ձակ և այլ քաղաքները, և ամենին հետզհետէ տիրելով,  
իւր Ամիրգունա նախարարը վերակացու կարգեց նրանց  
վրայ։ Ապա այնուհետեւ մինչև 1620 թուականը, 2 կամ  
3 տարին միանգամ, դարձեալ արշաւում էր չայաստան,  
Օսմանցիների հետ պատերազմելու նպատակով և ամեն  
անգամ էլ մեծամեծ նեղութիւններ էր պատճառում թէ  
հայ ժողովրդին և թէ մանաւանդ Էջմիածնայ աթոռին։

Խնչպէս որ մի քանի դար առաջ Պարսից և Յունաց,  
այնպէս էլ այժմ Պարսից և Օսմանցւոց դահակալների  
համար չայաստանը դարձել էր մի կոռուպիննոր, Չնայե-  
լով որ նա բաժանուած էր արդէն երկուսի մէջ, այսու-  
ամենայնիւ նրանցից ամեն մինը «սահման քաջաց զէնք  
իւրեանց» հին առածին հետևելով խլում էր միւսից նրա  
տիրապետած գաւառները, երբ այդ իրեն համար հաճելի  
կամ հնարաւոր էր լինում։ Եւ այդ անում էր ոչ թէ կա-  
նոնաւոր պատերազմ մղելով իւր հակառակորդի դէմ,  
այլ աւեր և ապականութիւն սփռելով ընդհաննուր երկրի  
մէջ, քաղաքներն ու գիւղերը քանդելով, բնակարանները  
կողոպտելով և հրդեհելով, ժողովուրդը կոտորելով կամ  
գերի վարելով։ Եւ այս բոլորի համար տուժում էր չայ-  
աստանի ապարագդ ժողովուրդը, թէ արևելեան և թէ  
արևմտեան մասերում։

Ահա այս տագնապալից ժամանակներում օդնութեան էր հասնում ժողովրդին Սիւնեաց Անապատը կամ Վարդապետարանը, նրա հայրենասէր միաբանութիւնը, որին զլուս էր կանգնած Մարգիս եպիսկոպոսը և որի մէջ փայլում էին Ծովսէս վարդապետ Սիւնեցին, Կիրակոս վ. Տրապիդոնցին, Պօղոս վ. Մոլացին, Արիստակէս վ. Ճամբեցին, Թովմաս եպիսկոպոս Ցաթեացին, Դաւիթ եպ. Ճամբորեցին, Կարապետ եպ. Էջմիածնեցին, և այն և այն. դրանք ամենքը վերցնելով իրենց հետ նաև իրենց հասուն աշակերտները, ցրուել էին Հայաստանի զանազան կողմերը և գործում էին:

Բայց ինչ էին անում նրանք.—Մինը շրջուն քարոզի պաշտօն ստանձնելով յուսադրում ու մխիթարում էր վհատեալ ժողովրդին և սովորեցնում նրան ժամանակի անցաւոր նեղութիւններն արհամարհել: Միւսը գերի գնացող ազգակիցներին ընկերանալով և նրանց կրած տանջանքներին մասնակցելով իւր հայրական խրատներով կազմուրում և ամրապնդում էր նրանց հաւատը և վառ պահում ազգային զգացումը: Երբորդը՝ երկրից գաղթել ուղող ժողովրդին յորդորում էր ժամանակաւոր նեղութիւններից չընկնուել և հայրենական տունն ու անդաստանը օտարին շմատնել: Ումանք քաղաքներում ու գիւղերում դրաբոցներ հիմնելով նորանոր առաքելութեանց համար աշակերտներ էին պատրաստում, իսկ ուրիշները՝ անշքացած ու աւերուած վաճքերը մտնելով նոր միաբանութիւններ, նոր զինուորութիւններ էին հաստատում և դրանց հետ միացած հղորապէս մրցում պապական մարդուսների դէմ, հալածելով նրանց գլխաւոր կենդրուններից, կամ անվսաս դարձնելով նրանց ժունաւոր և ազգակործան քարոզութիւնները:

Դրանց բոլորին այդ ժամանակ ոգևորում էր միայն մի միտք. այն է թէ «հունձք բազում են և մշակք սակաւ»

և թէ «պարա է հանել զմշակս ի հունձո մեր...»:

Այս նշանաւոր անապատի միաբաններից Մովսէս վարդապետ Սիւնեցուն, (որ անապատի հիմնադիրներից մինն էր և որ յետոյ արժանաւոր կաթողիկոս դարձաւ), իբր գործունէութեան միջավայր՝ վիճակուած էր Գողթան գաւառը: Այդ տեղ նա Պօղոս վարդապետ Մովսէցու հետ միասին յիշատակաց արժանի շատ գործեր արաւ, եկեղեցիներ շինեց, վանքեր նորոգեց, միաբանութիւններ հաստատեց. բայց որ ամենից գլխաւորն էր՝ Աստապատ, Ճոռոթ և Ագուլս գիւղերում դպրոցներ բացաւ. մի գործ, որ իւր ժամանակի համար ոչ միայն շահաւէտ այլ և կարի յառաջադիմական էր, որովհետև մինչև այն՝ միայն վանքերում ու անապատների մէջ էին ուսում աւանդում ցանկացողին:

Ագուլսի դպրոցում Մովսէս վարդապետը վերակացու և ուսուցիչ կարգեց իւր ձեռնասուն և Սիւնեաց Անապատի յառաջադէմ աշակերտներից մէկին, — դա երետասարդ և նորընծայ Տէր-Անդրէան էր, մի գործունեայ, առաքինի և անձնուէր քահանայ, որի յիշատակին, ահա, նուիրում ենք յետագայ զրոյցը:



## Ա.

Հրվիւ քաջ զամնն իւր զնէ ի վերայ  
ոչխարաց իսկ որ վարծկանն է, որ ոչ է  
հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարցն, եթեւ  
տեսանէ զգայն զի գայ, թողու զոչխար-  
սըն եւ փախչի եւ գայն յափշտակէ զնո-  
սա եւ ցրուէ:

Աւետ. Յովհ.

1617 թուականի աշունն էր. Օքուդ-Ահմէդ փաշան  
յուսահատուել էր արդէն երկար և ապարդիւն պաշարու-  
մից, Մօտ երեք ամիս էր ինչ նա իւր բազմաթիւ զօր-  
քերով գտնուում էր Երեանայ բերդի առաջ և սակայն նրա  
զնդերը դեռ չէին կարողացել նոյն իսկ մի փոքր խրա-  
մատ բանալ սրա պարիսպների տակ. Ճահաբասի զօրքը,  
որ պաշտպանում էր բերդը, ոչ միայն քաջութեամբ յետ  
էր մղում Օսմանցիների յարձակումը, այլ և պարսպից ու  
տշտարակներից կարկուտի նման տեղացող զնտակներով  
ու նետերով և, մանաւանդ, դիւրավառ նիւթերի հրահո-  
սանով մեծ կոտորած էր անում նրանց մէջ. Վերջապէս  
վրայ հասան և աշնանավերջի ցուրտն ու բքաբեր օրերը.  
Օսմանցիք տանջուում էին որքան Արարատեան դաշտի դա-  
ժան ցրտերից, նոյնչափ և վերահաս սովից. Օքուդ-Ահ-  
մէդը որոշեց՝ վերցնել պաշարումը և հեռանալ Պարին,  
գոնէ իւր զօրքերը սովից ազատելու համար, որովհետեւ  
նման հանգամանկներում յաջողութեան ոչ մի յոյս չէր  
մնում նրան.

Երբ Օսմանեան զնդերը Ճիրակը անցան, Ճահաբասը  
նոյնակս պատրաստուեց հեռանալ Երեանից. Բայց Պարս

կաստան գնալուց առաջ, նա կամենում էր մի երկու շաբաթ անցնել նախիջևանում՝ հայերի հիւրասիրութիւնը վայելելու համար։

Սմիրնունա նախարարը, որին Զահարասը դեռ 12 տարի առաջ ընդհանուր կառավարիչ էր նշանակել Պարսկական Հայաստանի վրայ, և որը չայ աղզի հաշուին խիստ հաճոյական ծառայութիւններ էր անում Զահին, օր առաջ արդէն սուրհանդակներ դրկեց ամեն կողմ որպէս զի նահանգի մեծամեծներն ու հարուստները ժողովումն նախիջևան և, ըստ սովորութեան, փառաւոր ընդունելութիւն անեն Զահին։

Եյդ ընդունելութիւնը կայանում էր նրանում, որ բացի հանդիսաւոր թափօրով, եկեղեցական ու գուսանական երգերով և աշխարհախումբ ժողովրդեան ովսանաներով նրան դիմաւորելը, պէտք է, նա և, երկրի հարուստ ու կարող անձինք առատ պարզեներ ու լնծաներ բերէին Զահին։

Այս պատճառով Զուղայից, Որտուատից, Ագուլիսից, Ցղնայից և ուրիշ փոքր ի շատէ նշանաւոր աւաններից ու զիւղերից աճապարում էին նախիջևան՝ հարուստ վաճառականներ, խօցաներ, աղնուականներ ու մելիքներ՝ իւրաքանչիւրն իրեն վայել լնծաներով։ Ոչ ոք զրանցից խոյս տալ չէր կարող, որովհետև Սմիրնունայի զործականները յականէ անուանէ ճանաշում էին բոլորին, իսկ Զահարասը նոյնպէս պակաս տեղեկութիւններ չունէր դրանց մասին։ ըստ որում մօտ տասն և հինգ տարի էր ինչ նա շարունակ հարստահարում ու կեղեքում էր բոլոր կարող անձանց։

Բայց անա անակնկալ հրաման դուրս եկաւ թէ Զահի իւր նշանակած երկու շաբաթը պիտի անցցնէ ոչ թէ նախիջևանում, այլ Ագուլիսում։ Հետևապէս Սիսականի ժողովուրդը այդտեղ պիտի սպասէ արեգակնավայլ Զահին։

Ամիրգունան ստիպուած էր նոր սուհանդակներ ղըր-  
կել նախիջևան և Միսականի ուրիշ հեռաւոր կողմերը:  
Այդ, ի հարկէ, մի ծանր գործ չէր: Բայց նրան մեծ զար-  
մանք պատճառեց Զահի նոր կարգադրութիւնը, որովհե-  
տեւ Ագուլիսը, իրեւ մի հասարակ աւան, ոչ մի գրակիչ  
հանգամանք չոնէր, որով արժանացած լինէր իւր վե-  
հապետի բարձր ուշաղը թեան: Ի՞նչ նպատակ ունէր  
ուրեմն Զահի՝ որ որոշել էր երկու շաբաթ անցցնել  
Ագուլիսի նման չոր և մերկ սարերով պատած մի ձո-  
րակում:

Այս մասին, ի հարկէ, նախարարը չէր համարձակիլ  
բացատրութիւն խնդրել Զահից:

Բայց նա հանդիպելով Զահութ-բէկին, որ Զահի  
առաջին իշխանը և սենեկապանն էր, հարցրեց նրանից  
այդ կարգադրութեան պատճառը:

Զահութ-բէկը, որ մի հաստամարմին, ճարպալից,  
ածիլած դէմրով, սև ներկած բեղերով և վավաշոտ աչքե-  
րով պարսիկ էր, ծիծաղեց նախարարի հետաքրքրութեան  
վրայ:

— Ծիծաղելուդ պատճառը չեմ կարողանում գուշա-  
կել, ասաց Ամիրգունան. շատ գոհ կլինէի եթէ բէզը  
մասնակից անէր ինձ իւր ուրախ տրամադրութեան:

— Զահին ինքս խորհուրդ տուի Ագուլիս գնալու,  
յայտնեց Զահութ-բէկը, և նորից ծիծաղեց:

— Անպատճառ նորին վեհափառութեանը նորագոյն  
հաճոյը պատճառելու նպատակով. այնպէս չէ. հարցրեց  
Ամիրգունան:

— Այս: Ես տեսնում եմ որ Ամիրգունա-խանը շատ  
քիչ է հոգում այդ մասին:

— Սիսականում աւելի գեղեցիկ տեղեր կան, ուր ես  
կարող էի առաջնորդել Զահին, բայց նա այդպիսի ցան-  
կութիւն չէ յայտնել ինձ, նկատեց Ամիրգունան:

— Այս Սիսականում կան հրաշալի տեղեր բայց միմիայն Ագուլիսումն են գեղեցիկ տղաներն ու աղջկեները. . . :

Նախարարը հասկացաւ թէկի ակնարկութիւնը և ոչնչ չպատասխանեց.

— Իսկ դու, խան, երբէք չես մտածում ձահի զուարճութեան համար. Ագուլիսում, մինչև անգամ, «մանկաժողով» չէ եղած մինչև այսօր, յարեց ձահուլս-թէկը այնպիսի շրջութեամբ, որ կարծես մի շատ օրինական խնդրի մասին էր խօսում:

— Արեգակնակայլ Ձահը մեղանից իւրաքանչիւրին իրեն արժանի պաշտօնն է տուել, նկատեց նախարարը և հեռացաւ:

Ձահուլս-թէկը խորը խոցուեցաւ խանի այդ ակնարկութիւնից, բայց չպատասխանեց, որովհետև գիտէր որ Ձահը համարում ունի նրա վրայ. Այդ հանգամանքը թէպէտ կապեց իւր լեզուն, բայց և այնպէս նա որոշեց՝ անվճար չթողնել այդ պարտքը:

## Բ.

Նոյեմբերի սկիզբն էր, Տամբրի ու Պլուն սարերը, որոնք բարձրանում էին 8դնայ աւանի երկու կողմերից, ծածկուել էին մառախովով. ձիմը անընդհատ փոթորկում էր և քամին շառաչում ծղնայի ձորակի մէջ. Խօզա-Անձրեի տան առաջ պատրաստ կանգնած էր նրա ձին; Հետեւորդ ծառան գօտէսկնդուած և սանձը ձեռին սպասում էր տիրոջը:

Խօզա—Անձրեը դուրս եկաւ պատշգամը. Նայեց դէպի ձորակի տարածութիւնը և հարցրեց ծառային.

— Ձիմը չի դադարում:

— Ոչ, Տէր իմ, և երկի շուտ էլ չի դադարիլ, պատասխանեց ծառան և իւր այծենականի փէշով սկսաւ ձիու թամբի վրայ իշած ձինը սրբել:

Խօջա-Ըսձրել, որ միջահասակ, գիրով մարմնով, բարեղէմ և թէպէտ ալմոր, բայց դեռ ուժեղ և եռանդոտ մի մարդ էր, նորից կամենում էր մտնել տուն, երբ տեսաւ Ցղնայի բահանային. որ շտապ բայլերով դիմում էր դէպ իրենց դարպասը:

— Դէհ, որդի, էլ ուշանալու ժամանակ չէ, շուտ հեծիր ձիդ և ճանապարհուկիր,— ասաց քահանան տան սանդուլիներից բարձրանալով և մի ժալծլած թուղթ Խօջային ուղղելով— Տես խեղճ մարդը ածուխով է գրել. բանտի մէջ նվ կտար նրան մելան ու գրիչ. բայց կարողացել է ժամանակին հասցնել:

— Ո՞վ բերաւ այս նամակը, հարցրեց՝ Խօջան և թուղթը շտապաւ վերցրեց քահանայից:

— Իմսարիկաւագը. ուղիղ կաթողիկոսի մօտից է գալիս:

— Ի՞նչ է ասում, դեռ կապնւած է նա:

— Այս, մեր մեղքից. այն էլ ծանր շղթաներով։ նախարար միջնորդել է որ գոնէ այդ շղթաներից ազատեն վեհափառին, բայց ձահը մերժել է։ Եւ այդ դրութեան մէջ էլ, ասում են, հետը պիտի տանէ Պարսկաստան, եթէ չկարողանանք պարտքերի համար մի բան հոգալ:

— Օ՛, ի՞նչ սև օրերի հասանք, և արդեօք մեր նր մեղքերի համար, բացազանչեց Խօջան և ապա սկսեց կարդալ նամակը, որ բաղկացած էր հետևեալ տողերից.

« Բարեպաշտ որդիք.

« Երկու օր առաջ իմ տանջանքները թեթևացրին, « այսինքն, ոտքերս գելարանից հանելով՝ շղթաների մէջ « դրին. Փարբաշբաշին ասաց թէ՛ ձահը որոշել է գալ Ա- « գուկիս այդ պատճառով էլ հրամայել է շղթայել ինձ. « հետիւտն այդտեղ բերելու համար, ինձ չի վշտացնում,

« այս անարդանքը, որ կրում եմ Աթոռի վրայ բարձած  
 « անիրաւ պարտիքի համար: Գուցէ ես ունիմ, նա և, յան-  
 « ցանքներ, որոց համար պատժում է ինձ Աստուած. թող  
 « ուրեմն իմ բերանը տրտունջ չարտասանէ նրա սուրբ  
 « կամքի դէմ: Բայց վշանում եմ սաստիկ, որ Շահի գա-  
 « լուստը նոր թշուառութիւն պիտի բերէ ձեր գլխին:  
 « նախարարը իւր հաւատարմի ձեռքով քաղտնի ինձ  
 « յայտնեց թէ Շահը Ազսւիս հասնելուց «մանկաժողով»  
 « պիտի անէ... Ուրեմն շտապեցէք շարիքի առաջն առ-  
 « ներ, քանի աւերող ոտքը չէ կոխել ձեր հողը:

« Աշխատեցէք մանաւանդ հեռացնել «Փրանիկներին»:  
 « շատ բան նրանք են թելադրում: Օգուտ են քաղում մեր  
 « նեղ զրութիւնից, կարծես. Մահմեդի սուրբ բաւական չէ:  
 « նրանք էլ մի կողմից են դէնք տալիս բարբարոսների  
 « ձեռքը... Աշխատեցէք ի սէր Աստուծոյ փառաւոր ըն-  
 « դունելութիւն անել. գուցէ նախախնամութիւնը մեղ-  
 « մացնէ Շահի սիրաբը:

### Մելքիսեդեկի

#### Մշտաշարչար կաթողիկոս»

Խօջա—Անձրել ընթերցումը վերջացնելով գլուխը  
 շարժեց և նամակը ծալելով ծոցը դրաւ:

— Պատրաստուիր, էլ սպասելու ժամանակ չէ. հրա-  
 մայեց նա ծառային և ներս մտաւ:

Ծառան կապեց իսկոյն պայուսակը իւր ձիու գաւա-  
 կին, մաքրեց նորից տիրոջ ձիու թամբը և պատրաստ  
 կեցաւ:

Խօջան դուրս եկաւ տանից շալէ վերարկոն հա-  
 գած և երկար արծաթապատ հրացանը ձեռին. Թա այդ  
 ժամանակուայ նորանար և խիստ յարգի դէնք էր և հա-  
 յերից միայն ընտրեալներս ունէին իրաւունք կրելու. այ-  
 սինքն նրանք, որոնք արժանաւոր ծառայութիւն էին ա-  
 րած Շահին կամ նախարարին, կամ որոց վերջինս իբրև  
 առանձին շնորհ՝ կթոյլատրէր կրելու:

Խօջայի հետ դուքս եկաւ նաև նրա ամուսին Սա-  
 ռա-խաթունը, որ թէպէտ տարիքն առած, բայց տակաւին  
 գրավիչ, քաղցրահայեաց, բարեսիրտն կարի ժրագլուխ մի

կին էր։ Նա յայտնի էր ոչ միայն Գողթան գաւառին, այլ և նոյն իսկ Զահարասին։ Վերջինս նրան տեսել էր առաջին անդամ Ձուղայում և այնքան հաւանել՝ իբրև ընտիր մօր և տանտիկնոց, որ նրան իւր «մայր» էր անուանել։

— Ասա որ տղաներին ու հասակաւոր աղջկերանց օր առաջ գիւղերը ցրեն, պատուիրում էր ամուսնուն Մառախաթունը։ Այստեղ ես կարող եմ յիսուն հոգու տեղ պատրաստել. իւրաքանչիւր երկու հոգուն կզետեղեմ մի ընտանիքում. բայց միւս գիւղերը թող բսան բսան հոգուց աւելի շուղարկեն և ամեն ընտանիքի չվստահանան։ ամեն տեղ առաջուց մարդիկ զրկեցէր. ամենքին զգուշացրէք։

— Անպատճառ, անպատճառ, ասաց Խօջան և արագ արագ սանդուվստներից իջնելով հեծաւ իւր նժոյդը և դուրս եկաւ բակից։

Ժառան հետևեց տիրոջը։

Սառա-Խաթունը և տէր-հայրը «բարի ճանապարհ» մաղթեցին նրանց։

Հեծեալները իջան դէպի Յղնայի—ջուրը և նրա ուղղութեամբ ձիավարելով, շուտով ծածկուեցան աշքից։

#### ¶.

Վերին-Ազուլիսի Խցաձոր անուաննեալ թաղի վերջում, ուր գրեթէ սպառւում էին բնակութիւնները, գտնւում էր Սուրբ Յովհաննէս անունով եկեղեցին։ Նա կառուցած էր լեռան ստորոտում, նեղ ձորալանջի վրայ և արևելեան ու հիւսիսային կողմերից փակուած էր պարտէզներով։ Ամարային ամիսներում, երբ կանաչում էր լեռնալանջը և ծառերը ծածկուամ էին տերենով, այդ մենաւոր եկեղեցու շուրջը տիրուամ էր կենդանութիւն։ Աւանի զրօսասէր ժուռած ս.

դովուրդը խոնսում էր պարտէզների մէջ և դուարճացող-ների երգն ու պարը գրաւում էին նոյն իսկ Խցածորի մենակեացներին:

Բայց այժմ, երբ ձիւնը ծածկել էր լեռնալանջը և պարտէզները զրկուել էին կանաչից, Ս. Յովհաննու շուրջը տիրում էր ամայութիւն։ Նրա բարձր պարիսպները ծածկում էին եկեղեցին անցորդի աշքից և միայն սրածայր գմբէթն էր նրա գոյութիւնը յայտնում։ Նոյն իսկ եկեղեցու բակում շարժում չէր երևում և տիրող լոռութիւնը ընդհատում էր միայն վճիտ աղբիւրակը, որ մերձակայ ձորալանջից ենելով փողրակների միջով դալիս, մտնում էր եկեղեցւոյ բակը և կարկաչելով թափւում քարաշէն աւաղանի մէշ, որ պատած էր արդէն սառուցով։

Ամպամած երկինքը բացուեցաւ։ Արևը, որ դէպի մուտն էր խոնարհում, իւր անգօր ճառագայթները սփռեց ձիւնապատ շրջականների վրայ՝ կամենալով, կարծես, մեղմել ցրտի խստութիւնը։ Նրա շողերից մի քանիսը խաղում էին դեռ Ս. Յովհաննու գմբէթի վրայ, երբ ծերունի ժամահարը գուրս գալով իւր խցից՝ բարձրացաւ դէպի եկեղեցու կտուրը և սկսաւ հնչեցնել այդտեղ կախած փայտէ կոչնակը։

Այդ կոր ու բարակ և մաքուր յղկուած տախտակի ձայնը, որ թէպէտ խուկ, բայց հաճելի մեղմութեամբ հընչում էր թաղի մենաւոր հեռաւորութեան մէջ, հասաւ Խլցածորի բարեպաշտ ժողովրդի ականջին։ Ջուտով ձիւնապատ ճանապարհի վրայ երևացին մարդկանց ու կանանց խմբակներ, որոնք շտապում էին դէպի աղօթարանը։ Բայց դրանցից առաջ եկեղեցու սրահը լցուել էր արդէն մանուկ ժողովրդով։ Դրանք ժամի բակում գտնուող դպրոցի սաներն էին, որոնք իրենց պարապմունքն աւարտելով խռնուել էին այդտեղ, երեկոյեան ժամերգութեան մասնակցելու և ապա իրենց տները ցրուելու։

Սշակերտներից նրանք, որոնք դպիրներ կամ երգեցողներ էին, փութացին աւանդատունը ժամաշապիք հագնելու, իսկ մնացեալները եկան և եկեղեցու դասերում կարգով շարուեցան։

Դրանց ետեւից ներս մտան երկուքահանաներ. մինը՝ Տէր Սարգիսը, որ միջահասակ, նիհար մարմնով, փոքրադէմ և խորամանկ աչքերով ու հաղիւ քառասունը անցրած մարդ էր. միւսը՝ Տէր Յովսէփը, որ ներկայացնում էր առաջնի հակապատկերը, այն է բարձրահտսակ, հաստամարմին, սպիտակամօրուս և բարի դէմքով ծերունի։

Վերջինս անցնելով աշակերտների մօտով սիրով ողջունեց նրանց և կանգնեց իւր տեղը՝ աջակողմեան դասում։ Մինչդեռ Տէր Սարգիսը այլքանով չգոհացաւ. նա մօտեցաւ ձախակողմեան դասի աշակերտներին, նայեց նրանց վրայ խոժոռ աչքերով և հանդուրժելով, կարծես, որ տղաների խումբը՝ առանց վերակացուի կարգադրութեան, կանգնած էր այդտեղ հանգիստ ու կարգով, կոշտ ձայնով հարցրեց.

—Ո՞ւր է ձեր վարժապետը։

—Դպրոցումն է, պատասխանեցին մի քանի ձայներ։

—Ժամ օրհնելու ժամանակ է, ի՞նչ է շինում նա դպրոցում։

—Խօսում է Փրանկիների կարգապետի հետ։

—Հայր Երազմոսի... հարցը Տէր Սարգիսը աչքերը մեծ բանալով։

—Այն, նա եկել էր մեր դպրոցը տեսնելու։

—Հըմ... հասկանում եմ, յարեց Տէր-Հայրը և գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով մօտեցաւ Տէր Յովսէփին։

—Տեսնեմ ես, ժամ օրհնելու ժամանակ է և մեր ապատութին» դեռ չկայ. ասում են Տէր Մատթէոս Երազմոսի հետ զրոյց է անում... ի՞նչ ես կարծում, այդ Փըրանկը ի՞նչ ունի Տէր Անդրէասի հետ։

— Աստծուն է յայտնի... անհոգ կերպով պատասխանեց Տէր Յովսէփը:

— Այն, Աստծուն է յայտնի. բայց ինձանից էլ ծածով չէ: Քեզ արդէն ասել եմ, և կտեսնես որ իմ գուշակութիւնը կկատարուի. նա այս աշակերտներին Փըրանկ է դարձնելու:

— Ե՞ն, Տէր Մարգիս, դու էլ խիստ չար մտքեր ես անում:

— Հաստատ բան եմ ասում, կտեսնես.

— «Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն: Հայր մեր որ յերկինս...» երեսը խաչ հանելով Տէր Յովսէփը սկսաւ ժամն օրհնել՝ առանց Տէր Մարգսի խօսքերին պատասխանելու:

Վերջինս դժգոհութեամբ հեռացաւ իւր դասը:

Մի քանի վայրկեանից եկեղեցին ժողովրդով լցուեցաւ: Բայց ժամերգութիւնն արդէն կիսած էին, երբ ներս մտաւ Տէր Մնդրէասը և դրան մօտ գտնուած դարակից իւր սկ վերօնը հանելով ձգեց ուսերին և եկաւ կանգնից Տէր Յովսէփի մօտ:

Սա տակաւին երիտասարդ, նրբակազմ, բայց վայելու հասակով, գրաւիչ դէմքով և խելօք աշքերով մի քահանայ էր: Նրա համեստ շրթունքների վրա ծաղկում էր մի ժպիտ, որ ցոլացնում էր իւր մէջ նրա սրտի բարութիւնը. իսկ աղու հայեացը արտայատում էր սէր, խանդ և գորով: Հարուստ, խարտիշագեղ մաղերը, որոնք երկար գանգուրներով գալիս, փուտում էին նրա ուսերի վրայ. նուրբ, մետաքսանման մօրուքը, որ կարծես բուսել էր նրա ծնօտին՝ դէմքի շբնաղ գեղեցկութիւնը չար աշքերից ծածկելու համար և սկ զգեստի արտաքին տխրութիւնը, որին համակերպում էր նրա խաժակն աշքերի անոյշ հայեացը, այդ երիտասարդ հոգևորականին տալիս էին նախնի դարերի հրեշտակակրօն մի սուրբի կերպարանք:

Երբ նա առաջացաւ դէպի բեմը՝ աւուր պատշաճի քարողը կարդալու, կարծես ազօթող ժողովրդի աշքերը գերեց իւր ետևից։ Ամենքը սկսան նայել նրա վրայ, ամենքի դէմքերը պայծառացան, իսկ կանանց սրտերը, ինչպէս միշտ, սկսան նրա շուրջը թևապարել։

Մյդ եկեղեցում, ինչպէս տեսանք, Տէր Անդրէասից զատ կային և ուրիշ երկու քահանաներ, բայց ժողովուրդը խոնաւում էր եկեղեցի, ասես թէ, նրա պատճառով, կամենում էր տեսնել միայն նրան. լսել միայն նրա ձայնը, ազօթել միայն նրա հետ։ Երբ նա իւր սաների ձայնակցութեամբ սկսում էր երգել, ամենքը զմայլում, հոգիանում էին. ամենքի մէջ էլ զարթնում էր զերմեռանդութիւն. և այդ ոչ թէ նրա համար որ նա երգում էր աւելի անոյշ ու ախորժ ձայնով, այլ նրա համար, որ ժողովուրդը գիտէր, ճանաչում էր նրան, ճանաչում էր նրա սիրտը, հոգին, գործերը... այդ պատճառով նրա ազօթքըն ու երգը շարժում էր ժողովրդի սիրտը, յափշտակում էր նրա հոգին։

Մի մարդ միայն չէր կարողանում տանել այդ ամենքից սիրուած անձին, չէր կարողանում տեսնել նրան առանց նեղքին տհաճութեան. — դա Տէր-Մարգիսն էր։ Երիտասարդ քահանայի յաջողութիւնները, որոնք կայանում էին նրա օրըստօրէ ժողովրդին սիրելի դաւնալու մէջ, հանգիստ չէին տալիս իրեն։ Տէր-Անդրէասի բոլոր գործերի մէջ նա տեսնում էր միայն չարիք ու վնաս. նրա պարկեշտ վարքը, նրա առաքինութիւնը նա համարում էր ստութեան և կեղծաւորութեան դիմակ. նա չէր հաւատում նրա սրտի սրբութեան. և այդ պատճառով էլ աշխատում էր որ ժողովուրդը նոյնպէս չհաւատայ, չը խաբուի։

Երբ ժամերգութիւնը վերջացաւ և ժողովուրդը դուրս եկաւ եկեղեցուց, Տէր-Անդրէասը նոյնպէս հաւաքեց աշ-

կերտները և դուրս գնաց: Բայց բակում դեռ կանգնած էր բաւական ժողովուրդ և սպասում էր իւր սիրելի քահանային: Նա կամենում էր կրկին անզամ տեսնել նրան և լսել նրանից մի քանի խելօք կամ միսիթարական խօսքեր: Զէ որ այդ ժողովուրդը ապրում էր չար ժամանակում և ամեն օր ունենում էր մի նոր ցաւ, նոր վիշտ:

Ամեն անզամ երբ Տէր-Սարգիսը տեսնում էր իւր պաշտօնակցին ժամաւորներով շրջապատած, նախանձի կիրքը վառում էր իւր սրտում և դէմքը զայլոյթից, զրեթէ, այլագունեում էր: Որովհետև տեսնում էր որ իւր մով այլ ևս զբաղուող չկայ և այն օրից որ այդ երիտասարդ քահանան մուտ էր գործել ս. Յովհաննու եկեղեցին, ժողովուրդը կարծես էլ չի ճանաչում իրեն: Երբեմն Տէր Սարգիսը դիտմամբ ուշանում էր եկեղեցում, որպէս զի ժողովուրդը հեռանայ և ինքը չտեսնէ նրան՝ իւր ատելի պաշտօնակցի հետ սիրախօսելիս: Բայց շատ անզամ էլ ինքն էր առաջինը դուրս գալիս եկեղեցուց, որ չհանդիպէ ատելի տեսարանին:

Այսօր դիպուածով ժողովուրդը յառաջեց և ինքը ստիպուած էր դուրս գալ ամենից վերջ, եւ ահա նա տեսաւ կրկին նոյն տեսուարանը, ժամաւորները դարձեալ շրջապատել էին Տէր-Անդրէսամին: Դժբաղդպարար ս. Յովհաննէս եկեղեցու երկու դռներն էլ հիւսիսային կողմի վրայ էին և ժողովուրդը բակի այդ կողմն էր հաւաքուած, ի՞նչ անէր Տէր-Սարգիսը, որ տեղով խոյս տար: Նրա բարկութիւնը մանաւանդ սաստկացաւ՝ երբ տեսաւ ծերունի Տէր-Յովհէփին, որ ժամաւորների հետ կանգնած ինքն էլ ժպտադէմ լսում էր երիտասարդ քահանային:

— Ապուշ, այսքան տարի ապրել է Կաշխարհում և դեռ իւր չարն ու բարին չի կարողանում ճանաչել, շընչաց Տէր-Սարգիսը և մօտենալով ծերունուն՝ քաշեց նրա թնից:

— Հայ, ինչ կայ, Տէր-Մարդիս, հարցրեց Տէր-Յովսէփը:

— Տէր հայր, ինչու չես ճանաշում քո բարեկամն ու թշնամին, խօսեց Տէր-Մարդիսը. գլուխէ շնչալով:

— Ո՞վ է իմ թշնամին, Տէր-Մարդիս. այսքան տարի է ապրում եմ աշխարհում և թշնամի չեմ ունեցել. միթէ ծերութեանս օրերում լոյս ընկաւ նա, հարցրեց Տէր-Յովսէփը մեղմութեամբ և, միևնոյն ժամանակ, շարունակեց ճանապարհը:

— Այդ սատանան թէ քո և թէ իմ թշնամին է:

— Ո՞ր սատանան, հարցրեց ծերունին զարմանալով:

— Տէր-Մնդրէասը:

— Ինչու:

— Ի՞նչպէս թէ ինչու. չես տեսնում որ այն օրից, ինչ դա քահանայ դարձաւ և մեր թուլութեամբ մուտքուծեց այս եկեղեցին, էլ ժողովուրդը չէ ճանաշում մեզ. Պատիւ է՝ նրան են տալիս. խորհնմարդ է՝ նրան են հարցնում. հացկերոյթներին՝ նրան են հրաւիրում... մինչդեռ մենք, այսքան տարուայ քահանաներ, մնացել ենք մի կողմ քաշուած. էլ հվ է առաջուայ նման մեզ յարգում. Ամենքին դա գրաւել, կախարդել է, շարունակ մեզ վատարանելով և ինքը սուտ ճգնաւոր ձեանալով՝ յիմարացրել է ժողովրդին... բայց մինչև երբ. չէ որ պէտք է շարիբի առաջն առնել:

Տէր-Յովսէփը, որ լսում էր ընկերին հանգիստ սըրտով, հանգստութեամբ էլ պատասխանեց.

— Տէր-հայր, լաւ քահանային ամենքը կսիրեն. Տէր-Մնդրէասը ոչ սատանայ է, ոչ շարախօս է, ոչ սուտ ճգնաւոր է. այլ բարի և իւր պարագը ճանաշող մի քահանայ է: Եթէ կամենում ես որ ժողովուրդը քեզ էլ այնպէս պատուէ ինչպէս Տէր-Մնդրէասին, եղիր նրա նման: Ժողովրդի սիրտը գրաւելու միակ միջոցը այդ է. ընկե-

լողդ զրապարտելով, կամ նրա մասին չարախօսելով բնաւ շես շահուիլ:

— Ինչպէս երևում է նա քեզ էլ խելքահան է արել. մարդիկ քանի ծերանում՝ իմաստնանում են, իսկ դու ընդհակառակը... խօսեց Տէր-Մարգիսը յանդզնօրէն:

— Վատ լեզու ունիս, եղբայր, այդ լեզուով ու սրտով աշխարհում ապրել չի կարելի, մեղմով նկատեց Տէր-Յովսէփը:

— Հապա ի՞նչ անեմ որ այդպէս չխօսեմ. Ասենք թէ ես անարժան եմ և ժողովուրդը ինձ չի յարգում. դու հօ, փառք Աստուծոյ, արժանաւորներից մինն ես. Աստուծոյ տան այսքան տարուայ սպասաւորն ես, ծերացած, ալեռած, քեզ ինչու չի պատում այնպէս՝ ինչպէս այդ հորելուվին»:

— Որովհետեւ ես էլ նրա արժանիքը չունեմ, անկեղծօրէն պատասխանեց ծերունին. ես արդարև, բարեացակամ եմ ամենքին. կուզեմ որ ժողովուրդը հանգիստ ապրէ, յաջողակ լինի, ցաւից ու վշտից ազատուի. բայց ինքս զրա համար չեմ հոգալ, չեմ աշխատիլ. և եթէ ուզենամ էլ չեմ կարող, որովհետև Աստուծած զրկել է ինձ այդ չնորհքից. Մինչդեռ հայր Մնդրէասը. ինչպէս տեսնում ես, ամեն բան անում է, ամենքի կարիքին հասնում է:

— Ոչինչ էլ չէ անում, այլ երևեցնում է: Նա Ունիթօրների գործակատարն է, ուրիշ ոչինչ: Տեսնում ես, Մատթէոս Երազմոսը գաղտնի այցելութիւններ է անում նրան. իսկ մեզ, մինչև անզամ, չի բարեսում. ի՞նչ գաղտնիք է սա. ինչու չես խելամտում....:

Տէր-Մարգիս, ես ոչ կռուելու, ոչ հակառակելու ախորժակ ունիմ. գնա ուրիշին պատմիր այդ նորութիւնները... ցուրտ է. ես շտապում եմ տուն. մնաս բարով. Աստուծած խաղաղութիւն տայ սրտիդ... ասաց Տէր-Յով-

սէփը և կամացուկ բայլերով խոտորեց դէպի իւր տան  
ճանապարհը:

— «Ողորմելի արարած...», շնչաց Տէր-Մարգիսը ծե-  
րունու ետևից և ինքն էլ ուղղուցաւ դէպի իւր տունը:

Բայց մենք թողնենք սրանց իրենց ճանապարհի վրայ  
և Տէր-Մարգիսին՝ Ս. Յովհաննէս եկեղեցու բակում  
և մի քանի տարով դէպի անցեալը վերադառնանք:

## ¶.

## Ո՞վ էր Տէր Մնդրէասը:

Աղքատ, բայց առաքինի և բարեպաշտ ծնողաց զա-  
ւակ էր: 1605 թուին, երբ Հանարասը Հայաստանի  
շատ նահանջները դատարկելով ժողովուրդը քշեց դէպի  
Պարսկաստան, ի միջի այլոց դատարկեց նաև Նախիջևան  
քաղաքը: Խնչակս միւս տեղերից, նոյնպէս և Նախիջևա-  
նից փախչող ու թագչողներ շատ եղան: Նախիջևանցի  
փախստեայների մէջ կային, նաև Տէր Մնդրէասի ծնողը,  
որոնք գերեվարութեան արհաւիրները անցնելուց յետ՝ ելան  
իրենց թագստեց և Ագուիս գիւղը գալով բնակութիւն  
հաստատեցին այդտեղ:

Որովհետև այդ ժամանակ Սիւնեաց վարդապետարա-  
նը կամ չարանց անապատը, որ գտնում էր Ծղուկ գա-  
ւառում, հետզհետէ ծաղկում և հռչակ էր ստանում, պա-  
տանի Մնդրէասի ծնողը տուին նրան այդտեղ ուսանե-  
լու: Այդ անապատում նա աշակերտեց հայրենասէր և ա-  
ռաքինազարդ Մովսէս վարդապետ Սիւնեցուն, որ ժա-  
մանակի ուսման հետ միասին՝ ներշնչեց այդ ուշիմ և աշ-  
տատասէր պատանու մէջ, նաև, իւր հոգին: որ սովորեցրեց  
նրան Աստծուն և հայրենիքին ճշմարտութեամբ ծառա-  
յելու դժուարին արհեստը, որ ծանօթացրեց նրան Սիւ-

նեաց անապատի ամենագլխաւոր վարդապետութեան, այն է անձնուիրութեան ազնուագոյն գաղափարի հետ,

Եւ որովհետեւ այդ ժամանակ չայ աղզը կորցրել էր ամեն ինչ, եւ թագ, եւ գահ, եւ իշխանապետութիւն և զրկուած էր ոչ միայն զէնքից, այլ և սրտի կորովից և իւր թշուառ դոյութիւնը պահպանելու համար՝ կրում էր գերութեան և ստրկութեան անարդ լուծը, ուստի հայրենասէր գործիչներին մնում էր միայն հազնել հոգեստրականի սքեմ, ստաձնելքարողչի և ուսուցանողի պաշտօն և մըտնելով ժողովրդի մէջ՝ գաղտուկ դարմանել այն ցաւերը, որոնց անկարելի էր սպեզանի զնել յայտնապէս։ Ըստ որում ժամանակակից բռնութիւնը, որ չէր պատկառում ոչ մի սրբութիւնից, գոնէ կրօնական սրեմին չէր խանգարում ուսուցանել...։ Եւ ահա այդ պատճառով Սիննեաց անապատը իւր բոլոր առաքեալներին, իւր անձնուէր մըշակներին զինում էր այդ սքեմով և այնպէս ուղարկում նրանց «ի հունձս չայսստանեայց»։

Երիտասարդ Անդրէասին էլ Մոլսէս վարդապետը կամեցաւ կուսակրօն դարձնելուց յիտ շրջուն քարողչի պաշտօն յանձնել և ուղարկել հեռաւոր հօտերի մէջ։

Բայց որովհետեւ նրա ծնողները ցանկացան որ իրենց «միակ» և «աչքի լոյս» որդին գործէ իրենց մօտ, որպէս զի աղատ ժամերում մվախթարէ, նաև, իրենց ծերութիւնը, ուստի Մովսէս վարդապետը դպրոց հիմնեց Ագուլիսում, նման այն դպրոցներին, որ նա հիմնել էր Աստապատ և Զնոռութ գիւղերում և ուսուցիչ ու վերակացու կարգեց երիտասարդին այդ դպրոցի մէջ։

Թէպէտ Սիննեաց Ուկստի և իւր վարդապետի ցանկովեամբ Անդրէասը մտադիր էր կուսակրօնութիւն ընդունել, բայց որովհետեւ իւր ուսուցչութեան օրերում նա մի աարօրինակ դիպուածով սիրահարուեց իւր դրացու դստեր չքնաղ Վարդիթերի վրայ, (որպիսի դիպուածի

պատմովթիւնը պիտի անենք յետոյ), ուստինա ամուսնացաւ այդ աղջկայ հետ։ Բայց որպէս զի դարձեալ հաւատարիմ մնայ իւր ուստին և առաւել յաջողովթեամբ կարողանայ ուսուցանել թէ մանուկ սերնդին և թէ հասակաւոր ազգակցացը, նա ամուսնանալուց յետ քահանայ ձեռնադրուեց և կարգուեց հովիւ Խցաձորի Ս. Յովհաննէս եկեղեցում։

Ի՞նչ էր անում այսուհետև Տէր-Անդրէասը, ի՞նչպէս էր արդիւնաւորում Սիմնեաց անապատի ներշնչած գաղափարները. այդ կտեսնենք այժմ։

Նրա առաջին գործը դպրոցն էր, որի մէջ՝ ուսման հետ միասին՝ ջամբում էր հայ մանուկներին առաքինութեան և հայրենասիրութեան անսարատ կաթը. նա գիտէր որ ինքը, իւր ընկերները և ուսուցիչները բաւական չէին դեռ ժամանակակից թշուառութիւնները բառնալու, հայրենիքի խոպանացած դաշտերը հերկելու և մշակելու համար, թէ հարկաւոր էր միշտ և շարունակ նոր մարդիկ ու նոր մշակներ հանել այդ դաշտերը... նա գիտէր, մինոյն ժամանակ, որ իւր խնամոց յանձնուած մանուկներից պիտի յառաջանային ապագայ մշակներն ու գործիչները, ուստի և անընդհատ տքնում, աշխատում էր ոչ միայն աւանդել նրանց ժամանակին յարմար ուսումը, այլ և ներշնչել նրանց մէջ այն հոգին, որ ստացել էր նա Սիմնեաց վարդապետարանից, ներշնչել բարւոյ, ճշմարտի և մանսաւանդ թէ՝ անձնուիրութեան գեղեցիկ զգացումները, սլատրաստել նրանցից եւ առաքինութեան քարոզիներ, եւ հաւատոյ զինուորներ, եւ գաղափարի նահատակներ... 2է որ այդ բոլորին կարիք ունէր հայրենիքը, որ ճնշում էր այդ ժամանակ բռնութեան անիրաւ լուծի տակ. . . :

Ահա դրա համար էր աշխատում Տէր-Անդրէասը Ագուեաց դպրոցի մէջ։

Խոկ դպրոցից դուրս նա քահանայութիւն էր անում։

բայց ի հարկէ, ոչ այնպէս, ինչպէս որ անում էին միւս քահանաները, այսինքն, աստուածային պաշտօնը՝ նիւթական եկամտի աղքիւր դարձնողները, ոչ, նա քահանայութիւն էր անում բառի իսկական և աղնուազոյն նշանակութեամբ, այսինքն այնպէս, ինչպէս հասկանում էին այդ պաշտօնը նախնի սուրբ հայրերը՝ «վինել քահանայ Աստուծոյ բարձրելոյ» և կամ «փոխանորդ Աստուծոյ յերկրի», Որքան մեծ, և վսեմ կոչում, բայց որքան ստորացած ժամանակակից տգիտութեան չնորհիւ...: Սակայն այդ տգիտութիւնից ազատ էր Տէր-Անդրէասը, ուստի և կատարում էր իւր պաշտօնը սրբութեամբ: Նա չէր բաւականանում եկեղեցուն սպասաւորելով, կամ տաճարի մէջ քարոզներ խօսելով, այլ քահանայութիւն էր անում նաև տներում: Նա գիտէր թէ որքան մեծ է թշուառների թիւ վը աշխարհում և, հետեապէս, այն ժողովրդի մէջ, ուր ինքը քահանայագործում էր, ուստի և ազատ ժամերը գործ էր գնում այդ թշուառների, կամ օգնութեան կարոտ անձանց նեղութիւնները բառնալու կամ թեթևացնելու համար: Եւ այդ դէպքում նա ոչ թէ սպասում էր որ կարիք ունեցողը գար և խնդրէր նրեն, այլ ինքն էր գնում և պտրտում նրանցւ Ալսպէս նա մտնում էր աղքատի խըրճիթը, հիւանդի խուցը, որբերով շրջապատած այրիի տընակը և ամեն մէկի կարիքն իմանալով շտապում էր նըրան օգնութեան համեմատի՝ աղքատին ապրուատ հայթայթելով, հիւանդին՝ սպեղանի մատուցանելով, այրիին՝ պատէն ու ինսամակալ գտնելով և հալածուածին՝ պաշտպան հանդիսանալով: Նա մտնում էր հարուստի կամ հզօրի տունը, բայց ոչ իւր համար շահ որոնելու, այլ միշտ մի տկար անձի կամ ընտանիքի կարիքը հոգալու, նրա համար չնորհ կամ պաշտպանութիւն հայցելու:

Բացի նիւթապէս նպաստելը՝ նա օգնում էր ժողովրդին, նաև բարոյապէս: Եթէ երկու բարեկամների

մէջ խռովութիւն էր ծագում, Տէր-Մնդրէասը իսկոյն յայտնուում էր նրանց մէջ։ Իւր քաղցր խօսքերով, շահաւութիւն կատարեցներով նա հանդարտեցնում էր կրքերը. դադարեցնում խռովութիւնը և հաշտութեան ստիպում հակառակորդներին. Եթէ ամուսինների մէջ գժտութիւն էր պատահում, սիրոյ կամ սրբութեան ոգին հալածում նրանց տնից և դրան փոխարինում չարութեան ճիւաղը, Տէր-Մնդրէասը դարձեալ երեսում էր նրանց մէջ։ Նա հետաքննում էր նախ գժտութեան պատճառները և ապա մեղմ խրատներով, սրտազրաւ յորդորներով զերմացնում նրանց սառած սրտերը, զարթեցնում նորէն ընտանի զգացումները, կեանք տալիս նրանց կենազուրկ հոգոն և այդպիսով շինում կործանուող տունը։

Եթէ յանկարծ վախճանում էր մէկի սիրելին, որի համար նա մնում էր անմիշիթար, Տէր-Մնդրէասը չէր բաւականանում մեռածը թաղելով կամ թէ նրա համար «հոգւոց» ասելով, այլ յաճախ այցելում էր սգաւորին, հարուստ լինէր նա թէ աղքատ, և իւր անոյշ խօսքերով, հոգեպարար զրոյցներով միսիթարում էր նրա սիրտը, կազդուրում էր հաւատը և հաշտեցնում դժբաղդին աշխարհի ծանր վշտերի հետ։

Եթէ մի, կամ մի քանի ընտանիքների հանդիպում էր յանկարծ մի անակնկալ դժբաղդութիւն, բնութեան մի հարուստ, Տէր-հայրը դիմում էր իսկոյն այդ հարուստից աղատ, կամ կարող անձանց և սրանց միասնական օգնութիւնը ձեռք բերում դժբաղդների վնասը դարձանելու համար։

Այդ բաւական չէր. նա խառնուում էր շատ անգամ այնպիսի գործերի, որոնցից աւելի զօրաւոր մարդիկ փախուստ էին տալիս. Այսինքն. պատահում էր յաճախ, որ ըսնաւոր կառավարութեան անողորմ հարկահանները, կամ կեղեգիները թափում էին անպաշտպան մի ընտանիքին

վրայ՝ երբեմն ծեծելու, երբեմն տուգանելու և շատ անգամ կողոպտելու կամ առևանդելու նպատակով։ Տէր-Ասդրէասը խօսոյն համնում էր օգնութեան։ Բարբարոսներին յաղթահարելու համար նա գործ էր զնում բազմազան գէնքեր. մերթ խնդիր և աղաչանք. մերթ համոզիեր խօսքեր, երբեմն սպառնալիք, որ գործադրում էր նա իրեն հաւատարիմ երիտասարդների ձեռքով. իսկ երբ այդ միջոցները անկարող էին լինում բռնաբարումն արգիլել, այն ժամանակ նա անձամբ դիմում էր Երևան և Ամիրգունայ նախարարին բողոքում, կամ եթէ բողոքելու տեղը չէր լինում, նրա ոտքերն ընկնում, խնդրում ու աղերսում, մինչև որ վերջապէս ձեռք էր բերում անհրաժեշտ օգնութիւնը։

Այսպիսով Տէր-Ասդրէասը Ագուլիսի և նրա շրջակաների համար զարձել էր մի անզուգական խնամակալ, հաշտութեան մի միջնորդ, փրկութեան մի հրեշտակ։ Ժողովուրդը նրան ընդունում էր ոչ իրեկ լոկ քահանայ՝ այլ և հարազատ հայր, եղբայր, մտերիմ և բարերար։ Ով կարիք ունէր Տէր-Անդրէասին էր դիմում. ով մի վիշտ ունէր, նրան էր յայտնում, ով խորհրդի պէտք ունէր՝ նըրան էր հարցնում։ Չնայելով իւր երիտասարդութեան և մատաղ հասակին, նրա խորհրդին հետեւում էին նոյն խոկծերը և փորձառու մարդիկ. Միով բանիւ, Տէր-Անդրէասը դարձել էր իւր ժողովրդի սուրբն ու պատգամախօսը։

Եւ այս խոկ պատճառով, եթէ իւր կարգակիցների մէջ կային շատերը, որոնք անկեղծօրէն սիրում էին նըրան, որպիսին էր, օրինակ, ծերունի Տէր-Ցովսէփը, այսու ամենայնիւ, պակաս չէին և այնպիսիք, որոնք ատուա և արհամարհում էին, որովհետև չէին կարողանում տեսնել ժողովրդի դէպի նրան տածած մեծ համարումը և չնախանձել նրան, ինչպէս, օրինակ, Տէր Սարգիսը։

Բայց նա ամենքին պատւում, հաւասարապէս սիրում և նոյն իսկ իւր չարակամներին բարի էր ցանկանում, ըստ որում ճանաչում էր իւր պաշտօնը, յարգում էր իւր կոչումը, և գիտէր որ իբրև ըրիստոնեայ, և Քրիստոսի օրինաց ուսուցիչ՝ պարտաւոր էր ներել իւր եղբօրը, եթէ նա մեղանչէր իւր դէմ ամինչև եօթանասուն և եօթն անդամ...»:

Բայց նա խիստ էր դէսլի անուղղայ չարերը և անբարոյականները. նա հալածում էր նրանց, որքան իւր ոյժերը ներում էին իրեն, որովհետև այդպիսիները վնասում էին ժողովրդին թէ նիւթապէս և թէ բարոյապէս. դառնում էին գայթակղութեան քար. մոլորեցնում էին անփորձներին և խանգարում հասարակական անդորրութիւնը:

Այդպիսիների կարգն էր դասում Տէր-Մնդրէասը նա և Միաբանող կամ Ունիթօր կոչուած պապականներին, որոնց ժողովուրդը «փոանկ» անունով էր ճանաչում. Այդ քարոզիչները Պապի ստրուկների թիւը բազմացնելու նըպատակով, ամեն միջոց գործ էին դնում հայադաւաններին մոլորեցնելու և իրենց եկեղեցու ծոցից հեռացնելու համար. Այդպիսով նրանք ժողովրդի մէջ սերմանում էին գժտութիւն և խռովութիւն, իսկ ընտանիքների մէջ մըտցնում բաժանման ոգի. Այդպիսի վարմունքը Տէր-Մնդրէասը համարում էր ազգակործան, այդ պատճառով էլ զինսում էր Ունիթօրների դէմ իւր բոլոր գօրութեամբ: Նա նրանց աւելի վնասակար տարը էր համարում քան կեղերիչ պարսիկներին, ըստ որում, պարսկի տուած վընասը նիւթական էր և ժամանակաւոր, մինչդեռ սրանցը տեսական էր և հոգեւոր. Պարսկի հարուածը շուտով կմոռացուէր, իսկ սրանց տուածը դարերի ընթացքում աղգի մարմնի մէջ վէրը ու թարախ, կակիծ և վիշտ պիտի գոյացնէր... Եւ հ գիտէ թէ մի օր, հէնց հայրենիքի

փրկութեան գործը դարբնելու ժամին, դարերով առաջ սերմանած այդ գժութիւնը՝ արգելք չը պիտի լինէր Սուրբ ու Միծ գործին՝ ծնելով դրանց միջից սաղբողներ ու դաւաճաններ....:

Այս նկատմամբ, ահա, հայրենասէր երէցը ոչ միայն չէր ներում «փրանկների» վարմունքը, որոնք Աւետարանը դարձրել էին մարդուսութեան ուռկան, այլ և հզօրապէս մարտնչում էր նրանց դէմ թէ հրապարակական քարոզութեամբ և թէ իւր հօտի իւրաքանչիւր անդամին առանձնապէս այդ մարդուսներից զգուշացնելով և կամ մոլորեալ-ներին նորէն հարազատ մօր գիրկը դարձնելով։ Այդ դէպ-քում Ռևիթօրները Տէր-Անդրէասին ընդունում էին իբրև հզօր հակառակորդ և աշխատում էին զանազան միջոց-ներով արգելք լինել նրա գործունէութեան, որը, սակայն, օր ըստ օրէ աւելի լայն ծաւալ էր ստանում։

Ահա այս մարդն էր Անդրէաս երէցը, որին թողեցինք մենք Ս. Յովհաննէս եկեղեցու գաւթում, ժամաւոր-ների բազմութեան հետ խօսելիս։

Այժմ նորէն դառնանք նրա մօտ։

## Ե.

Այդ երեկոյ ժամաւորները շրջապատել էին Տէր-Անդրէասին՝ սովորական խնդիրներից դուրս մի ուրիշ նորութեան մասին խօսելու։ Եւ որովհետև զրոյցը կարող էր երկարել, իսկ դրսում ցուրտը սաստկանում էր, ուստի տէր-հայրը հրամայեց ժամկոչին կրակ վառել դպրոցատանը։

Երբ ժերունին իւր գործն աւարտեց, երէցը հրաւիրեց ժամաւորներին դպրոցատան սրահը։

Դա երկար ու ընդարձակ մի ներքնատուն էր, նեղ ու բարձրադիր պատուհաններով և քարեայ, կամարակապ

առաստաղով։ Նա կառուցած էր լեռ այն ժամանակ, երբ Ս. Յովհաննու եկեղեցին ունէր մշտական միարանութիւն, իսկ նրա շուրջը գտնուող ձորակներում ապրում էին բազմաթիւ մենակեացներ, (որոց խցերի անոնով ձորն ու թաղը կոչուցան «Խցաձոր»)։ Այդ կամարակապ ներքնատունը այն ժամանակ ծառայում էր Ս. Յովհաննու միարանութեան և նրա շուրջը ապրող մենակեացների համար իրը սեղանատուն։ Այդ պատճառով նրա մէջ տեղում, սկսած մի ծայրից մինչև միւր՝ ձըգւում էր սրբատաշ քարերից շինած սեղան, իսկ դըրա շուրջը նոյնպէս քարեայ նստարաններ՝ նման հայոց մեծ վանքերում եղածին։

Եւ որովհետև այն ժամանակ, երբ Մովսէս վարդապետը դպրոցներ էր հիմնում Սիսնիքում, և Յովհաննու միարանութիւնը ցրուած, և հետեապէս, սեղանատունը գոցուած էր, ուստի վարդապետը օգուտ քաղելով պատրաստի բնակարանից՝ Ագուլիսի դպրոցը զետեղեց այդ ներքնատան մէջ, որ իւր ընդարձակութեան պատճառով կարի համապատասխան էր ժամանակակից դպրոցի պահանջներին։ Ներքնատան վերնայարկում, որ բաղկացած էր մի քանի խցերից, ապրում էր ինքը Տէր-Մնդրէասը, իւր նորատի կնոջ և ծնողների հետ միասին։

Երբ ժամանակը հաւաքուեցան դպրոցատուն, որի մէջ, բացի ծխանի կրակը, փառում էին նաև երկու կանթեղներ, Տէր հայրը անցաւ սեղանի մի կողմը և բազմելով այդտեղ՝ հրաւիրեց ժողովրդին իւր շուրջը նստել։

— Խօսեցէք այժմ ձեր նորութեան մասին, դարձաւ նա իւր հանդէպ նստած երկու ժամանակը նորութիւններին։

— Մեր նորութիւնն այն է, Տէր հայր, ինչ որ յայտնեցինք քեզ. պատասխանեց նրանցից մինը. — ասում են թէ ձահը գալիս է Ագուլիս։ Եթէ այդ ճիշդ է, պէտք է ուրեմն պատրաստունք նրան ընդունելու։

— Ո՞վ հաղորդեց ձեզ այդ լուրը, հարցրեց երէցը:

— Ճռվայում լսեցինք,

— Իսկ շուկան ով բերաւ:

— Փրամնկների առաջնորդի ծառան. նա եկել էր մեր խանութիցիրեք գննելու, պատասխանեց լրատուներից մինը:

— Հա... Երազմոսի ծառան... հասկանում եմ... Ուրեմն ճիշդ է. խօսեց Տէր հայրը և զլուխը կախելով ընկաւ մտածութեան մէջ:

— Ինչու տիսրեցիր տէր հայր, հարցրեց ժողովականներից մինը:

— Զտիրեցի... այլ մտածում եմ.

— Բայց ինչու Երազմոսի ծառայի հաղորդածը անպատճառ ճիշդ պիտի լինի, հարցրեց մի ուրիշը:

— Որովհետեւ միենոյն նորութիւնը հաղորդել է ինձ ինքը կարգապետը: Իսկ նա այսօր է նախիջեանից եկել:

— Ունիթօրների կարգապետը... հարցրեց մի կակածաւոր ձայն:

— Այն. նա ասում էր թէ՝ Սմիրգունայի սուրհանդակը արդէն հասել է նախիջեան և այդ լուրը հաղորդել տեղացիներին. անշուշտ վաղն էլ Ագուլս կմտնէ.

— Բայց ինչ ունէր այստեղ կարգապետը... հարցրեց նոյն ձայնը:

— Եկել էր, իրու թէ, մեր դպրոցն ու աշակերտները տեսնելու, պատասխանեց երէցը. — բայց նվ զիտէ ուրիշ ինչ վաղտնի նպատակ ունէր այդ այցելութիւնը:

— Եւ քեզ ոչինչ չայտնեց.

— Ոչինչ, պատասխանեց քահանան:

— Իսկ ինձ յայտնել է. յարեց խօսողը, որ նշանառի յայտնի հարուստներից մինն էր, և որի տանը իջեանել էր կարգապետը:

— Ի՞նչ... ինչ է յայտնել, հարցրին ժողովականները այս ու այն կողմից:

— Ասում էր թէ՝ ես եկայ Ագուլիս այն նպատակաւ, որ Ճահի կողմից այստեղի հայերին վտանգ սպառնացած դէպրում պաշտպանեմ նրանց:

— Եւ ինչ վարձատրութիւն է պահանջում դրա համար, դառը ժպիտով հարցրեց Տէր-Անդրէասը:

— Ոչինչ. միայն թէ ասում է, այդպիսի դէպրում. հայերը պէտք է Ճահին յայտնեն թէ՝ իմ ժողովուրդն են իրենք:

— Օ՛... ի՞նչ անմեղն է, և այդ քիչ, շատ քիչ վարձատրութիւն է, այնպէս չէ....

— Բայց ինչ կը կորցնենք եթէ որևէ է վտանգի ժամանակ Ճահին յայտնենք թէ՝ մենք Երազմոսի ժողովուրդն ենք, հարցրեց ժողովականներից մինը:

— Են, որ միանգամ արդէն Ճահի ներկայութեամբ այդպիսի վկայութիւն տալուց յետ՝ այլ ևս իրաւոնք չէ ունենալ Ունիթօր չհամարուել կամ Երազմոսի ժողովուրդ չինել: Մի կարծէք թէ պասլական վարդապետը լոկ ձեզ բարիք անելու նպատակով վիտի միջնորդէ Ճահին: Երբէք նա գիտէ որ այսուհետեւ ձեզ կարող է պապական շինել ֆարրաշների մտրակով:

— Ի՞նչ ես ասում, Տէր հայր, միթէ այդպիսի բան կարնալ է լինել:

— Աւելի վատթարը կլինի: Միայն թէ դուք զգոյց կացէք և հայր Երազմոսին պատահած ժամանակ, եթէ նորէն այդպիսի առաջարկութիւն լսէք նրանից, ասացէք թէ՝ Պապից և պապականներից առաւել հզօր պաշտպան ունիք դուք և բնաւ կարօտ չէք նրանց խնամակալութեան:

— Բայց ով է մեր պաշտպանը, Տէր հայր, հարցրեց մի ծերուկ:

— Նա, որի Աջը կառավարում է տիեզերքը, նա, որի ձեռքումն է թագաւորների սիրտը... հանդիսաբար պատասխանեց երէցը և ձեռքը բարձրացրեց դէպի երկինք:

Սյդ միջոցին բակում լսուեցաւ ձիաների ոտնատրով և ամենքը իրենց ուշադրութիւնները լարեցին:

— Ո՞վ է այս, հարցրեց Տէր-Անդրէասը ժամկոշին, որ կանգնած էր դալրոցատան մուտքի առաջ:

— Տեսնեմ, ասաց ծերուկը և դուրս վաղեց:

Թայց մինչև նրա վերապանալը ներս մտաւ ինքը նորեկը, այծենականի մէջ փաթաթուած, մորթէ դդակը մինչև աշքերը քաշած և երկար, արծաթապատ հրացանը ձեռին:

— Օրհնեա Տէր. ասաց նորեկը և առաջ անցաւ:

— Աստուած օրհնեսցէ. պատասխանեց երէցը և տեսութիւնը լարեց՝ իմանալու համար թէ ով է եկողը. որովհետեւ կանթեղի տկար լոյսը չէր օգնում իրեն լաւ տեսնելու:

— Բարի երեկոյ, սիրելի Ագուեցիք, կրկնեց նորեկը և մօտենալով՝ մորթէ զլսարկը հանեց:

— Խօջա-Անձրի, այդ դու ես, բացագանչեց քահանան և վերկացաւ տեղից:

— Եյն Տէր-հայր, խոնարհ ծառադ եմ, պատասխանեց Խօջան և շտապեց, համբուրեց Տէր-հօր աջը. Ապա դառնալով ժողովականներին ողջունեց նրանց:

— Ես որ խաչից... յանկարծ Ագուիսում... մեր տանը:

— Զեղ հիւր եկայ, Տէր-հայր. միթէ չէր ընդունում:

— Աստծոյ հիւրն ես, բարեկամ, տեղ ունիս զլսիս վրայ. միայն թէ բարի լինի գալստեանդ պատճառը:

— Դուք փառաւոր կրակ ունիք. թոյլ տուէք դեռ մի փոքր տաքանամ. բուքն ու քամին մարմինս սառեցրել են... ասաց Խօջան՝ չկամենալով յայտնել իսկոյն գալլստեան պատճառը. Ապա մօտենալով կրակարանին, սկսաւ տաքանալ.

— Տաքացիր, տաքացիր, յետոյ կսօսես, ասաց քահանան և մօտ եկաւ Խօջային:

— Արդեօք օտար մարդ չկայ այստեղ, հարցրեց՝ վեր-  
ջինս շնչալով:

— Ոչ, բոլորն էլ մերոնք են, պատասխանեց Տէր-  
հայրը:

— Բայց ինչնւ են հաւաքուել:

— Ասում են Ճահը պիտի գայ. հաւաքուել են խոր-  
հուրդ անելու թէ՛ ինչ ձեռվ ընդունեն նրան:

— Այդ լաւ է. ուրեմն յարմար ժամանակին հասայ,  
ասաց Խօջան և քահանայի հետ միասին յառաջացաւ դէ-  
պի ժողովականների սեղանը և նստեց երէցի մօտ:

— Մի փոքր առաջ, Տէր-հայր, կամեցար իմանալ  
թէ արդիօք բարի է գալստեանս պատճառը, խօսել սկսաւ  
Խօջան՝ ի լուր ժողովականների. — այժմ կյայտնեմ թէ  
ձեզ և թէ մեր Աղուկեցի եղբայրներին: Դալստեանս պատ-  
ճառը բարի չէ, բայց մենք պիտի աշխատենք բարի  
դարձնել...

— Ի՞նչ. ինչ է պատահել. հարցրին այս ու այն  
կողմից:

— Ճահը գալիս է այստեղ...

— Այդ գիտենք. ընդհատեցին մի քանի ձայներ:

— Այս. բայց գլաւառը շգիտէք:

— Ասա, սիրելի Ընձրկ, գլաւառը ինչ է, հարցրեց  
Տէր-Անդրէասը:

Խօջան պատասխանելու փոխարէն՝ հանեց ծոցից  
կաթուլիկոսի նամակը և տալով քահանային՝ ասաց.

— Կարդա և ամեն բան կհասկանաս:

Տէր-հայրը սկսաւ կարդալ ինքն իրեն և երբ վերջա-  
ցրեց, տեսան որ տիրութիւնից նրա դէմքն այլայլուեց:

— Ի՞նչ է պատահել, Տէր-հայր, բարձր կարդա որ  
մենք էլ լսենք. կաթուլիկոսի նամակը ծածուկ չի լինի  
իւր որդիներից, խօսեց ժողովականներից մինը:

— Ծածկելու բան չէ, սիրելիներս, ընդհակառակը

ամենքդ պիտի իմանաք, ասաց քահանան և սկսաւ կարդալ նամակը, որի բովանդակութեան ծանօթ ենք արդէն։

Երբ նա հասաւ այն կէտէն, ուր կաթուղիկոսը ասում էր թէ Ամիրգունան յայտնել է իրեն՝ որ Ճան Ազուկիսում «մանկաժողով» պիտի անէ, ամենքը սարսափեցին։

—Ի՞նչ, «մանկաժողով»...<sup>1)</sup>

—Ոչ, այդ չի կարող լինել...

—Այս, անկարելի է. Ազուկիսը «խառ» է...<sup>2)</sup>, բացագանչեցին այս ու այն կողմից։

—Պարսից Ճանի համար անկարելի ոչինչ չկայ. Նըկատեց Խօջան. —ինչպէս տեսնում էր, նախարարը ինքն է կաթուղիկոսին յայտնել. իսկ նա վեհափառի բարեկամն է և սխալ լուր չէր հաղորդիլ նրան։

—Ուրեմն ի՞նչ պիտի անենք, հարցրեց մի ժողովական։

—Այ, հենց դրա համար էլ Ծղնայից շտապել եմ այստեղ որ տեսնեմ թէ ի՞նչ ենք անում... պատասխանեց Խօջան։

—Ի՞նչ պիտի անենք, Տէր-հայր, հարցրին քահանային։

Տէր-Անդրէասը, որ մինչև այն խորասուզուել էր մըտածութեան մէջ և, մինչև անդամ, չէր լսում թէ ի՞նչ են խօսում իւր շրջապատողները, գլուխը բարձրացրեց և նայեց ժողովականներին։

—Ի՞նչ պիտի անենք, Տէր-հայր, կրկնեցին վերջինները։

—Այն, ինչ որ այդպիսի գէպքում անում են ուրիշները, մեղմով պատասխանեց երէցը։

—Այսինքն։

—Պիտի աշխատենք թագինել գեղեցիկներին։

—Բայց նրտեղ։

—Մօտիկ գիւղերում։

—Օրինակ,

— Վաղաւեր, Վանանդ, Տեռնիս, Փառակերտ, Քաղաքիկ, Ցղնայ... միթէ բիշ տեղեր ունինք, նկատեց Տէր-Մնդրէասը:

— Ցղնայ կարող էք յիսուն հոգի ուղարկել. Խաթունս խոստացաւ այդքան հոգի տեղաւորել այնտեղ, խօսեց Խօզայ-Մնձրեր:

— Օքնսեալ լինի Սառա-Խաթունը, որ ամեն դէպքում օգնութեան է հասնում մեզ, ասաց Տէր-Մնդրէասը.

— Եթէ մեր բոլոր կանաք նրա պէս ժրագլուխ լինէին, որքան գործեր կարող էինք առաջ տանել...:

— Է՞՞ն, ի՞նչ կարող էինք անել բռնաւորի ձեռքի տակ, նկատեց ծերուկ ժամաւորը:

— Հայրիկ, միթէ բռնաւորը մարդ չէ. մսից ու արինից չէ շինուած. ինչու նա կարող է սպանել իսկ մենք՝ ոչ: Միթէ նա սուրը ձեռին է ծնուել իսկ մենք շղթայականպ... զանազանութիւնը մեր և նրա մէջ այն է, որ նա շարունակ բռնաբարում ու կեղեքում է, իսկ մենք հնազանդում ենք: Բայց եթէ միանդամ սովորէինք մահից շվախենալ, եթէ որոշէինք քիշ բիշ մեռնելու փոխարէն՝ միանդամից մեռնել, այն ժամանակ շատ բան միանդամից կփոխուէք:

— Ի՞՞նչ կփոխուէք, օրինակ, հարցրեց ծերուկը:

— Այն, որ ես և դու կզոհուէինք, բայց մեր որդիքը կապրէին. մի քանի հազար հայ կմեռնէին, բայց հայութիւնը կկենդանանար: Այս բնութեան օրէնքն է. մեռնող մի հատիկը, պատղաբերում է իւր նման հարիւրը. Քրիստոս ինքն է ասում՝ «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ...»: Ուրեմն մինչև որ չզոհենք, արդիւնաբերել չենք կարող:

— Ի՞՞նչ անենք ուրեմն, վեր կենանք վաղն և եթ կոմւ տանք հզօր Շահարասի հետ:

—Ես չեմ ասում վաղն և եթ... անխոհեմութիւն կը լինէր փոքր ուժով մեծի դէմ խիզախել... ինչ օգուտ՝ թաղել ցորենը հողում այնպիսի ժամանակ՝ երբ կատաղի հեղեղը ողողում է երկիրը և ցանքսերը քշում...: Ես միայն ցանկանում եմ որ արթուն լինինք. աշնան խաղաղ օրերում գետինը հերկենք, իսկ գարնան հալոցին՝ սերմերը ցանենք: Այնուհետև կհասնէ ամառը և արտերը կծածկուին հասկերով...: Եթէ մեր հայրերը ցանած լինէին, այսօր մենք կհսձէինք: Չդանդաղենք ուրեմն նրանց պէս որպէս զի մեր որդուց ու թոռանց անէծքին չարժանանանք:

Ժողովականները, որոնք շատ էին լսել Տէր-Անդրէասին, ըմբռնում էին նրա այլաբանութիւնները, ուստի բացադրութիւններ չպահանջեցին: Բայց Խօջայ-Անձրես ընդհատեց նրան:

—Այդ ամենը, տէր հայր, ապագայի խնդիր է. մեզանից շատերը ծերացել են արդէն. ուստի թէ հերկելու և թէ սերմանելու գործը մնում է երիտասարդներիդ վրայ. թող Աստուած ոյժ և կարողութիւն տայ ձեզ՝ սկսածներդ շարունակելու... այժմ միայն այն ասա թէ ինչպէս ազատուենք վերահաս վտանգից. որովհետև Շահը մի երկու օրից այստեղ կլինի:

—Դրա համար երկար մտածելիք չունիք: Դուք զնացէք գիւղաքաղաքի մեծամեծների հետ խօսեցէք թէ ինչ պատրաստութիւն պիտի տեսնէք Շահին ընդունելու համար: Այդ բանում ձեզ կօգնէ անշուշտ, նաև, գիւղի վերակացուն, որ, հարկաւ հրահանգներ կստանայ նախարարից. իսկ «մանկաժողովն» արգիլելու գործը թողէք ինձ վրայ:

—Ի՞նչ ես մտադիր անել, Տէր-հայր, հարցուց Խօջան:

—Թէ Ագուկեցոց և թէ Դաշտեցոց ընտանիքների և նրանց ունեցած երեխայոց թիւը յայտնի է ինձ, պատասխանեց երէցը.—գիտեմ նոյնպէս թէ նայ ունի այնպիսի

տղայ, կամ աղջիկ, որ կարող է գրաւել ձահին։ Ուրեմն հէնց այս գիշեր ես կը կազմեմ դրանց ցուցակը և կը որոշեմ թէ՝ որոնց նր գիւղ պիտի ուղարկենք, կամ ինչ ընտանիքների պիտի յանձնենք։ Այսուհետև կմնայ՝ որ իւրաքանչիւր հայր կամ եղբայր ուղեկցէ իւր տան երեխային։ իսկ ով ուղեկից չի ունենալ, ինքս նրան ուղեկից կտամ։ Վաղը երեկոյեան ամենքն արդէն ցըուած պիտի լինին գիւղերը։

— Եհ, ուրեմն այդ մասին հոգում ես դու, մենք էլ ընդունելութեան մասին մտածենք, խօսեց ազդեցիկ ագուցիներից մինը։

— Այս, բայց ընդունելութիւնից զատ մի ուրիշ բանի վրայ էլ պիտի մտածէք, աւելացրեց Տէր-հայրը։

— Ի՞նչ բանի... հարցրին մի քանի ձայներ։

— Կաթուղիկոսի ազատութեան, պատասխանեց երէցը

— Կաթուղիկոսի ազատութեան. ինչնվ կարող ենք օգնել նրան. հարցրեց հարուստներից մինը։

— Գիտէք որ նա կապուած է ոչ թէ իւր յանցանքի այլ աթոռի վրայ անիրաւաբար բարձած պարտքերի համար. հարցրեց երէցը։

— Գիտենք, պատասխանեցին նրան։

— Եհ, Աթոռը կաթուղիկոսին է պատկանում թէ ընդհանուր ազգին։

— Ի հարկէ ընդհանուր ազգին։

— Ուրեմն ազգն էլ պիտի դարմանէ աթոռի ցաւերը, յարեց քահանան։

— Բայց Մելիքսեթ կաթուղիկոսը... կամեցաւ չարախօսել ժողովականներից մինը։

— Աշխարհում ոչ ոք կատարեալ չէ . . . ընդհանուց նրան երէցը. — բացի այդ, իննիքին այն չէ թէ՝ նր կաթուղիկոսին ենք օգնում. այլ այն, որ հայոց կաթուղիկոսը կապուած, Լուսաւրչի ժառանգը կալանաւո-

ըուած է. պէտք է ուրեմն նրան աղատել... կալանաւոռութեան անարգանքը հասնում է ոչ լիժէ Մելիքսեթին՝ այլ կաթողիկոսական գահին. պէտք է ուրեմն այդ գահը աղատենք անպատճուղիմնից, սպառնացող վտանգից...: Այսպէս պէտք է մտածէ ամեն մի հայ, երբ տեսնէ որ օտար պարսկի ձեռը մօտենում է Հուսաւորշաւանդ աթոռին.

— Այդ ճիշդ է. բայց ինչ կարող ենք անել մենք, հարցրին մի քանի ձայներ:

— Ազրատներն ու չունեորները՝ ոչինչ. բայց հարուստները, խօջաները, մելիքները և միւս ազնուականները, որոնք պարտաւորուած մեծագլու ընծաներ կամ դրամական նստէրներ պիտի տանեն զահին, թող իրենց այդ ընծանները բաժանեն երկու մաս. մինը ներկայացնեն իրեւ նուէր զահին, միւսը՝ իրեւ վճար աթոռական պարտուց: Եթէ կանխաւ միանաք, ամեն ինչ որոշէք և տալիքներդ հաշուէք, կտեսնէք որ հեշտութեամբ աթոռի պարտքը կը վճարուի և կաթուղիկոն էլ կազատուի կապանքից:

Ժողովականները մի քիչ ժամանակ թեր և դէմ խօսելուց յետ, համաձայնուեցան Տէր-Անդրէասի հետ և ցրուեցան իրենց տները:

## Զ.

Քիչ ժամանակից յետ Տէր-Անդրէասը նստած իւր առանձնարանում ըրքրում էր հին ու նոր ցուցակներ, որոնց նա կազմել էր զանազան ժամանակներում և զանազան պէտքերի համար: Այդ ցուցակներից նա հանում էր Ագուլիսում և նրա Դաշտ կոչուած գիւղամասում ապրող զանազան ընտանեաց և նրանց երեխայոց անունները, իւրաքանչիւրի առաջ նշանակելով տղայոց տարիքը և այլ որպիսուղիմները:

Ճրագուկ մոմը, որ հազիւ էր փոքրիկ սենեակը լուսաւորում, իւր աղօտ լոյսը սփռելով երխտասարդ քահանայի վրայ՝ երևան էր հանում նրա լայն ճակատը, որ այդ վայրկենին ծածկուել էր կնճիռներով, խաժակն աչքերը, որոնք արտայայտում էին լուրջ մտահոգութիւն և գեղեցիկ դէմքը, որ համակուած էր անոյշ տիսրութեամբ։ Նա երբեմն դադարում էր գրելուց և գլուխը ափի մէջ առնելով սկսում էր մտածել։ Եւ այդ ժամանակ նա հոգւով սլանում էր հեռու, թեապարում այն ընտանիքների շուրջը, որոնք ունէին զաւակներ, մատղաշ աղջկունք, կայտառ տղաներ, և որոնց գուցէ, շուտով պիտի վիճակուէր՝ կորցնել այդ սիրելիներից մի քանիսին, կորցնել հոգւով և մարմնով... Ինչ պիտի լինէր այնուհետեւ այդ ծնողների վիճակը. Ինչով կարելի էր միխթարել նրանց. Մեռնողի համար սովորական էր ասել թէ՝ «Գնաց յաւիտենական կեանքը ժառանգելու», իսկ այսպիսիների համար ինչ կարելի էր ասել. — Ահա այս մասին էր մտածում Տէր-Անդրէասը։

Խուցի գուռը յուշիկ բացուցաւ և կիսամութի մէջ երևաց մի նորատի կնոջ պատկեր։ Դա Վարդիթեր Տիրուհին էր. Մի վայրկեան նա մնաց լուռ և նայում էր քահանայի մտազբաղ պարապմունքին։ Ապա նուրբ, ախորժալուր ձայնով հարցրեց։

— Դեռ երկար պիտի պարապես։

Երէցը գլուխը բարձրացրեց և նայելով նորատի կնոջ՝ քաղցր ժպտաց։ Այդ ժպիտը նման էր արեկի այն շողերին, որոնք ձմեռուայ սառնամանիքի ժամանակ, թանձր ամպերը ճեղքելով լուսաւորում են մուայլ լեռնալանջը մի քանի վայրկեան։ Միրուն կնոջ ձայնն ու ներկայութիւնը ցրեցին արդարս երիտասարդ քահանայի թափիծը. բայց այդ քիչ միջոցի համար միայն։ Որովհետեւ, հէնց նր սիրելի պատկերը հեռանար, նա դարձեալ պիտի խորասուզուէր իւր տիսրութեան մէջ։

— Զատ գործ չէ մնում, ասաց քահանան. եթէ  
ընթրիքը պատրաստ է, ես իսկոյն կդամ:

— Մի շտապիր, վերջացրու, մենք կարող ենք սպա-  
սել, ասաց նորատի կինը քնիքութեամբ և մօտենալով քա-  
հանային՝ սկսաւ դիտել նրա աշխատանքը:

Ճրադի լոյսը ընկաւ տիկնոջ վրայ և երևան հանեց  
նրա պատկերի բոլոր գեղեցկութիւնը. Դա հազիւ տասն  
և ութը անցրած, նրբակազմ ու գեղահասակ մի կին էր.  
Նզուլցւոց հին տարազը, որով նա հագուած էր. քիչ  
բան էր պակսեցնում նրա գեղեցկութիւնից. Զնայելով որ  
իւր զլուկը ծրարում էին զանազան պաստառներ և զոյն-  
զգոյն շպարչներ, ճակատի վրայ ծանրանում մի քանի կարգ  
ոսկեդրամ և պարանոցը պատում արծաթեայ ծանր ճար-  
մանդներ, այսուամենայնիւ, դէմքի այն բաժինը, որ աղատ  
էր ոսկեկար ճակտակապից, արծաթեզր երեսնոցից և  
սպիտակ քիմթկալից, ամփոփում էր իւր մէջ նրա գեղեց-  
կութեան էական մասերը. — Նուրբ, կամարակապ յօնքերի  
տակ շողում էին նրա սեռակ աշերը՝ իբրև զայդ հրավառ  
աստղեր, կեանքով ու կրակով լի և կարող գրաւելու ա-  
մենապստամբ սրտերը. Քնքոյց այտերի վրայ տակաւին  
շինում էր վարդը, որ նշան էր նրա հողեկան ու մարմ-  
նական քաջողջութեան. իսկ նոան կամար շուրթերից  
կաթում էր չնորդ ու ժպիտ՝ յայտարար նրա պարկեշ-  
տութեան. Նա հագած էր կերպասէ երկար շապիկ, որ  
իջնում էր մինչև ոտքերը. ապա կարճ բաճկոնակ՝ անջատ  
փէշերով և կոճկած թևերով. նոյնանման մինթան, որ  
կարած էր թաւշից և ունէր երկար ու կախ թևեր, եղե-  
քուած արծաթեայ բազմաթիւ կոճակներով. Սյդ ամենի  
վրայից՝ նրա փափուկ իրանը սեղմում էր արծաթեայ ծա-  
կոտիչն կամար, որն առհասարակ կապում էին երիտա-  
սարդուհիները, լստ որում աւելի տարիքով կանայք՝ դրա  
փոխարէն գործ էին ածում երկար, ասուեայ գօտի:

Տիրուհին լուռ և ժպտադէմ կանգ առաւ ամուսնոյ առաջ, որ ծալապատիկ նստած էր օթոցի վրայ և դէպի փոքրիկ սեղանակը կորացած՝ մերթ գրում և մերթ թերթում էր ցուցակները:

Ճուտով երէցը աւարտեց գործը և վերկացաւ տեղից: —Ի՞նչ ժողով էր դպրոցատանը, ինչնւ էր Խօջանձրեն եկել... հարցրեց տիրուհին, երբ երէցը կամեցաւ ընկերանալ իրեն:

—Ոչինչ... Ճահը պիտի գայ Ագուխ. խօսում էինք թէ՝ ի՞նչ ընդունելութիւն պատրաստենք նրա համար:

—Եյքան միայն:

—Եյն, ուրիշ էլ ի՞նչ պիտի լինէր:

—Ի՞նչ գիտեմ. չէ՞ որ ամեն օր մի տխուր նորութիւն է յայտնւում:

—2է, ուրիշ նորութիւն չկայ, ապահովացրեց տիրուհուն երէցը, չկամենալով անհանգստացնել նրա քընքոյց սիրտը:

—Երկի Ճահի հետ այն հրէշն էլ կգայ. այնպէս չէ. հարցրեց տիրուհին երկիւզով:

—Որ հրէշ:

—Ճահուկս բէկը:

Այս անունը արտասանելուց տիրուհու շրթունքները դոդացին:

Տէր Մնդրէասը նոյնպէս խռովուեցաւ, բայց նա աշխատեց թագցնել իւր յուզմունքը:

—Թող գայ, մեզ ի՞նչ փոյթ. Ճահուկս բէկի պէս շատերը կլինեն նրա հետ:

Տիրուհին ոչինչ չպատասխանեց, կարծես ինքն էլ իւր կողմից խնայելով ամուսնուն և ճանապարհ տուաւ որ վերջինս յառաջէ: Միւս սենեակի մէջ երէցի ծնողները սպասում էին որպուն ու հարսին: Երբ սրանք եկան, իրենք սեղան նստան:

Տէր-հայրը սեղանն օրհնեց և ընտանիքի չորս անդամները սկսան լուռ ու մոռնջ իրենց ընթրիքը վայելել։ Հետևեալ առաւօտ հաղիւ տախտակէ կոչնակը հընչեց, Տէր-Անդրէասը վեր թռաւ տեղից և սկսաւ հագնուել։ Բայց ո՞քքան մեծ եղաւ նրա զարմանքը երբ տեսաւ թէ՛ տիրուհին իրենից առաջ հագնուած շտապում է արդէն եկեղեցի։

— Ի՞նչ է պատահել, Վարդիթեր, ինչու այսպէս վաղ ես պատրաստուել, հարցրեց նա ամուսնուն։

— Վատ երազ տեսայ, տէր-տէր, շտապում եմ մոմ վառելու, պատասխաննեց տիրուհին։

— Ի՞նչ ես տեսել, հարցրեց քահանան։

— Ժամից յետ կասեմ, հիմա չեմ կարող... ասաց տիրուհին և սպիտակ շղարշատեռը վրան առնելով՝ դիմեց դէպի եկեղեցի։

Մտնելով տաճարը, որ տակաւին մի կանթեղով էր լուսաւորուած, նա ծունկ խոնարհեց մերկ յատակի վրայ, Ս. Աստուածածնի պատկերի առաջ և սկսաւ զերմեռանդութեամբ աղօթել։ Նա աղաշում էր Միածնի Մօրը որ իւր երազը՝ ի բարին կատարէ, և հեռացնէ իւր տան վրայից՝ սպառնացող չարիքը։ Նրա սրտաբուխ աղօթքներին միանում էին և արտասուաց կայլակներ, որոնք իջնում էին նրա լուսալիք աչքերից։

Աղօթքն աւարտելուց յետ նա գնաց, վերցրեց ժամկոչից երկու հատ դեղնամում և մօտենալով ձիթալիք կանթեղին, լոյս առաւ նրանից։ ապա երկու մոմերն էլ վառելով՝ բերաւ ու մնկեց Ս. Աստուածածնի պատկերի առաջ։

Երբ ժամկոչը սկսաւ եկեղեցին լուսաւորել, ներս մտաւ Տէր-Անդրէասը։ Նրան հետևեցին Տէր-Մարգիսն ու Տէր-Ցովսէփը։ Վերջինս սկսաւ ժամն օրհնել, իսկ միւսները սկիզբն արին ժամերգութեան։ Ժողովուրդը հետզհետէ խոնուալով լցրեց եկեղեցին։

Այդ ժամանակ արդէն Տէր-Անդրէասը մոռացել էր տիրուհու երազը։ Ելքը ժամերգութիւնն աւարտեցին՝ նա դուրս եկաւ եկեղեցուց՝ ուղղակի գեղամէջ գնալու համար։ Որովհետև այդ օրը շատ գործ ունէր կատարելու։ Բայց որովհետև պատրաստած թղթերը թողել էր տանը, ուստի ներս մտաւ վերցնելու։

Իւր խուցի մէջ նա տեսաւ Վարդիթերին՝ կանգնած լուռ ու մտամոլոր, Խոկոյն յիշեց նրա երազը և ժպտալով հարցրեց։

— Հա. դու էլի քո երազի մասին ես մտածում։

— Այս. պատասխանեց տիրուհին։

— Դէհ, պատմիր այժմ ինձ. ի՞նչ ես տեսել.

— Օ՛, սարսափելի բան, երկիւլից սիրոս պատռումէ։

— Է՛, լաւ, պատմիր որ իմանանք։

— Վախենում եմ... շատ եմ վախենում, իմ երազները կատարում են միշտ... յիշնամ ես. միանգամ էլ այսպիսի երազ տեսայ և կատարուեց։

— Ե՞րբ։

— Միթէ մոռացել ես. Զէ որ մի օր երազումս տեսայ որ Ճահոռուս բէկը յափշտակում էր ինձ և դու աղատում էիր... այդպէս էլ հօ եղաւ...։

— Այս. այդ դէպքը անկարելի է մոռանալ. բայց այժմ ի՞նչ ես տեսել։

— Այժմ... Այս, Սուրբ Աստուածածին, Դռն շարը խափանես և բարին առաջնորդես... բացազանչեց Վարդիթերը՝ գեղեցիկ աչերը դէպի երկինք ուղղելով։

— Պատմիր, Աստուծով ամեն ինչ լաւ կանցնի, սիրտ տուաւ երէցը։

— Ո՞ւր էր թէ Աստուած քո արդար խօպքը լսէր... Երազումս տեսնում էի, սկսաւ պատմել տիրուհին, որ Ճահարասը եկել, հասել է Ագուլիս և ժողովուրդը դիմատրում է նրան, դու էլ, եկեղեցական դասի հետ, առաջ-

նորդում էիր ժողովրդին։ Ես մնացել էի տանը՝ նանի  
հետ։ Յանկարծ ժամկոչը սկսաւ կոչնակը զարկել  
և գոռալ՝ «փախէք, զահուուխ-բէկը գալիս է»։ Ես շատ-  
պեցի նանին ծածկել, ապա ինքս էլ փախչում էի մի  
պահարան մտնելու։ Յանկարծ ներս մտաւ զահուուխը  
և ետեկցս վաղելով՝ գոչեց։ «Մ’ւր ես փախչում, Վար-  
դիթեր։ Անդրէան այն ժամանակ խլեց քեզ ինձանից,  
բայց այժմ չէ կարող……։ Այս ասելով նա վրայ է հաս-  
նում, բռնում է ինձ և գլխիս ոսկէ սարքը պոկելով՝ փախ-  
չում է…… Ես դուրս եմ գալիս աղաղակելու, օգնութիւն  
կանչելու. բայց տեմուսմ եմ որ մարդ չկայ բակում. մի-  
այն դրան առաջ կանցնած էր ֆրանկների կարգապետ  
Մատթէոս-Նրազմուը, որ ծիծաղում էր ինձ հասած այս  
դժբաղդութեան վրայ……։

— Այդ է բոլորը, հարցրեց երէցը ժպտալով։

— Այն, միթէ այս քիչ է։

— Եհ, այդ կնշանակէ թէ զահուուխ-բէկը մի քիչ  
դրամ է կորպելու մեզանից, զլուխը բար. թող տանէ,  
ինչ ուզում է. միթէ դրա համար արժէ տիրել։

— Զէ, տէր-տէր, սխալում ես, կնոջ գլխի զարդը  
իւր ամուսինն է…… Նա իմ գլխի զարդը պոկեց…… Ես վա-  
խնում եմ, ասաց տիրուհին և նրա շրթունքները կըկին  
դողացին։

— Անհոգ եղիր, իմ սիրում Վարդիթեր. այդպիսի  
բան չի պատահիլ. և վերջապէս նրանք ինչ ունեն ինձ  
հետ. միթէ իմ անձը նուէր պիտի աանեն զահին, հան-  
գըստացրեց երէցը Տիրուհուն և իւր թղթերը առնելով՝  
դուրս գնաց տանից։

### Մ Ո Ւ Ր Ա Ց Ա Ն

(Վերջը միւս համարում):